

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կրթության և մասնագիտական մանկավարժության (ԿՄՄ)
ֆակուլտետ

Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

սովորող ուսանողների համար

(Առկա ուսուցում)

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	3
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԵՐ.....	9
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	9
ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ.....	46
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ.....	51

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հհ	Մասնագիտության կրթական ծրագրի անվանումը	«Կառավարում» («Հանրային կառավարում» մասնագիտացմամբ)
1.	Ծրագրի հակիրճ նկարագրությունը	<p>«Կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիրը (այսուհետ՝ «Կառավարում» ծրագիր) (մասնագիտացումը՝ «Հանրային կառավարում») արտացոլում է ՀՀ ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի նկարագրիչների դրույթները: Ծրագրի նպատակն է ձևավորել ուսանողների մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները կառավարման և հանրային կառավարման ոլորտներում: Կրթական ծրագիրը շեշտադրում է այնպիսի մասնագիտական գիտելիքների ձևավորումը և մասնագիտական ու փոխանցելի հմտությունների զարգացումը, որոնք ներառում են ինստիտուցիոնալ, տեղական, ազգային և համաշխարհային համատեքստերում ռազմավարական և կառավարչական որոշումների կայացման գործընթացներում արժեքների և մասնագիտական էթիկայի ընկալում, ռազմավարական մտածողություն և կառավարում, գործառնական կառավարում, մարդկային ռեսուրսների և ֆինանսների կառավարում, շահակիցների ներգրավվում և կառավարում, կոնֆլիկտների կառավարում:</p> <p>«Կառավարում» ծրագրի շրջանակներում փոխկապակցվում են տեսական և գործնական բաղադրիչները՝ մասնագիտական կամ մասնագիտացման ոլորտներում շրջանավարտների գործունեություն ծավալելու պատրաստվածությունն ապահովելու նպատակով: Ծրագրի բոլոր դասընթացները ներառում են գործնական բաղադրիչ՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին տեսությունը կիրառելու մասնագիտական իրական կյանքի տարբեր իրավիճակներում: Հետազոտական պրակտիկայի և պրակտիկումի մոդուլներն իրական պայմաններին առավել մոտեցված հնարավորություն են ստեղծում կիրառելու ուսանողների գիտելիքները և զարգացնելու մասնագիտական կարողություններն ու հմտությունները:</p>
2.	ՈԱՇ մակարդակ/ Աստիճան	ՈԱՇ մակարդակ 7/մագիստրոսի աստիճան
3.	Տևողությունը	Առկա ուսուցում՝ 2 տարի, Հեռակա ուսուցում՝ 2.5 տարի
4.	Ծանրաբեռնվածությունը(ECTS)	120 ECTS կրեդիտ
5.	Դասավանդման լեզուն (ներք)	Անգլերեն և հայերեն
6.	Ակադեմիական տարվա սկիզբ	Մեպտեմբերի երկրորդ շաբաթը (առկա) Նոյեմբերի երկրորդ շաբաթը (հեռակա)
7.	Ուսուցման ձևը	Առկա/ հեռակա
8.	Ընդունելության պայմաններ	Հարցազրույց և անգլերենի իմացության թեստ

9.	Ավարտական պահանջները	Մագիստրոսական թեզի պաշտպանություն
10.	Ուսումնառության վերջնարդյունքները (գիտելիք, կարողություններ, հմտություններ)	<p>Գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • բացատրել, մեկնաբանել և դասակարգել կառավարման ու հանրային կառավարման ոլորտներին առնչվող հասկացություններն ու եզրույթները, կառավարման ժամանակակից համակարգերն ու մոդելները, կառավարման ոլորտի արդի հիմնախնդիրներն ու մարտահրավերները, • սահմանել և նկարագրել հանրային կառավարման/վարչարարության մոդելներն ու կառուցվածքները, դրանց դերն ու գործառույթները և մասնակցային որոշումների կայացման գործընթացները, • փոխանցել կառավարման ոլորտի մասնագիտական գիտելիքներ, ներառյալ կառավարման էությունը, ընդհանուր բնութագիրը, նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանությունը, ինչպես նաև հաղորդակցության, մոտիվացիայի, թիմային աշխատանքների վերաբերյալ տեսությունները • իմանալ կառավարման գիտության և տվյալ գիտակարգի ձևավորման նախադրյալները ու զարգացման փուլերը, կառավարման գիտության ուղղությունները, ինչպես նաև այս գիտակարգի տեղը տնտեսագիտության համակարգում և կապը մյուս տնտեսագիտական գիտությունների վրա, • դրսևորել կառավարման տեսությունների, գործառույթների և դրանց դասակարգման տարբեր մոտեցումների գիտելիք և իմացություն, • դրսևորել մակրո- և միկրոտնտեսագիտության հիմնական հասկացությունների, օրենքների և սկզբունքների իմացություն, • դրսևորել գիտական հետազոտությունների, ինչպես նաև դասավանդման մեթոդների և դրանց առնչվող տեսությունների և ժամանակակից մոտեցումների գիտելիք և իմացություն, • մշակել կառավարման գործընթացին առնչվող տարբեր ծրագրեր և մասնակցել դրանց իրագործման միջոցառումներին, • իրականացնել սպառողների, մրցակիցների և շուկայի վերլուծություններ, արդյունավետորեն պլանավորել, կազմակերպել և վերահսկել կազմակերպության մարքեթինգային գործունեությունը:
11.		<p>Հմտություններ`</p> <ul style="list-style-type: none"> • իրականացնել կարիքների գնահատում և արտաքին ու ներքին միջավայրերի ընդհանուր գնահատում` կիրառելով ՈւՒԹՀՎ (SWOT), SMART, RIPPLES և PEST վերլուծության գործիքները և առաջադրելով համապատասխան լուծումներ • կիրառել կառավարման և մասնագիտական հմտություններ` խնդիրների լուծման, ռազմավարական որոշումների կայացման և մասնագիտական հաղորդակցման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտներում • վերլուծել շահակիցների դերն ու գործառույթները հանրային

		<p>կառավարման ոլորտում,</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել ռազմավարական պլանավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները և բացահայտել ռազմավարական պլանավորման և կառավարման հիմնական փուլերը՝ ցուցաբերելով ռազմավարական պլանավորման և կառավարման փուլերի իրականացման համար անհրաժեշտ հմտություններ, • վերլուծել և գնահատել կոնկրետ իրավիճակում կառավարչական գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվության ամբողջականությունը և միջոցներ կիրառել այն ապահովելու ուղղությամբ:
12.		<p>Կարողություններ՝</p> <ul style="list-style-type: none"> • վեր հանել և բացատրել կառավարման տեղեկատվական համակարգերի /տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների և տեղեկատվական գրագիտության հիմնական խնդիրները կառավարման համակարգի և տեսության շրջանակներում • ուսումնասիրել կառավարման շուկայագիտությունը՝ ներառյալ հնարավորությունների գնահատումը, շուկայում կարիքների վերլուծությունն ու ծրագրավորումը, շեշտադրել ձեռք բերված գիտելիքի և կարողությունների միջոցով շուկայագիտության ռազմավարության մշակումը, նոր ծրագրերի իրականացումը, գնահատումն ու վերահսկում, • կիրառել կրթության որակի կառավարման արդյունավետության բարձրացման քաղաքականությունների մշակման ու իրականացման գործիքները, որակի ապահովման մեխանիզմներ, փոփոխությունների կառավարման և կրթական հետազոտությունների գնահատման լավագույն մոդելները • ապահովել կատարումը մարդկային ռեսուրսների կառավարում թիրախավորված ընկերության ռազմավարությանը համապատասխան և կազմել աշխատանքային նկարագրեր՝ • բնութագրել սպառողական շուկան և նրա բաղադրիչները՝ նկարագրելով սպառողական վարքագիծը և նրա վրա ազդող հիմնական գործոնները, դիտարկելով գնագոյացման հիմնախնդիրն ու քաղաքականությունը, ինչպես նաև առաջադրելով պրակտիկ օրինակներ գնագոյացման մեթոդների կիրառմամբ • գնահատել աշխատակիցների արդյունավետությունը, կիրառել մարդկային ռեսուրսների կառավարման գործիքակազմը և գործիքներ, • գուցաբերել կառավարչական, գիտակրթական, նորարարությունների գեներեցման կարողություններ և դրանց դարձնել փոխանցելի՝ մասնագիտական կարողությունների իրացման համապատասխան ոլորտներում արդյունավետորեն ներդնելով համար, • կատարել տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման աշխատանքներ, ինչպես նաև մասնագիտական խնդիրների լուծման նպատակով օգտվել ժամանակակից

		<p>տեղեկատվական տեխնոլոգիաներից,</p> <ul style="list-style-type: none"> • ընդունել կառավարչական որոշումներ՝ ստանձնելով և կրելով դրանց արդյունքների նկատմամբ պատասխանատվությունը:
13.	Հետագա ուսումնառության հնարավորությունները	ՈԱՇ մակարդակ 8 հետազոտող (ասպիրանտ, հայցորդ)
14.	Աշխատանքի հնարավորությունները	<p>«Կառավարում» ծրագրի շրջանավարտները կարող են իրենց հետագա մասնագիտական գործունեությունը ծավալել կառավարման ոլորտում, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> • ձևավորել կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ հավաստի տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու, մեկնաբանելու և կիրառելու հմտություններ, • տիրապետել հետազոտության ժամանակակից մեթոդներին, որոնք օգտագործվում են կառավարման ու հասարակագիտության ոլորտներում, և նպաստել դրանք կիրառելու հմտությունների ձևավորմանը, • բացահայտել և վերլուծել կառավարման արդյունավետության արդյունքներն ու ցուցանիշները տարբեր տիպի կազմակերպություններում՝ կիրառելով կառավարման մեթոդներ և գործիքներ, • զարգացնել գիտահետազոտական և կառավարման գործունեության ընթացքում առաջացող ու նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող խնդիրներ ձևակերպելու և լուծելու հմտություններ, • զարգացնել ձեռքբերված հավաստի արդյունքները մշակելու, վերլուծելու և իմաստավորելու հմտություններ՝ ելնելով հետազոտության առկա նպատակներից, խնդիրներից, տվյալներից, • տիրապետել ռազմավարական կառավարման, ներառյալ ֆինանսական կառավարման հիմնադրույթներին և մարտավարություններին, • իրականացնել կազմակերպության աշխատակազմի (մարդկային ռեսուրսների) արդյունավետ կառավարում:
15.	Ուսման վարձը	Մագիստրատուրա՝ 500000 AMD (առկա ուսուցում) 380000 AMD (հեռակա ուսուցում) Հայցորդություն՝ 360000 AMD

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՎ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Մասնագիտություն՝

041301.00.7 Կառավարում

041301.17.7 Հանրային կառավարում

Որակավորում՝

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ

ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 2

տարի

ՈՒՍՄԱՆ ՁԵՎԸ՝ ԱՌԿԱ

«Հաստատում եմ»

Ռեկտոր՝

Կ. Հարությունյան " _____ " 2021 թ.

Թվանիշ	Դասընթացի նվաճումը և բեռնվածությունը	Կրեդիտ	Կիսամյակ(ներ)	Ընդամենը, ժամ	Իրասխմություն, ժամ	Գործնական, ժամ /սեմինար/	Ինքնուրույն, ժամ	Կիսամյակներ			
								1	2	3	4
							120	16+4	16+4	16+4	16+4
							120	30	30	30	30
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅԱՄԱՍ	55		1650	580	216	854	22	6	16	
1*	Կառավարում	5	1	150	52	18	80	4			
2*	Հանրային կառավարում	5	1	150	52	18	80	4			
3*	Ձեռնարկատիրական տնտեսագիտություն	5	1	150	52	18	80	4			
4	Կրթության կառավարում	4	1	120	52	12	56	4			
5**	Շուկայագիտություն	3	1	90	28	18	44	2			
6**	Կառավարչական հմտություններ	3	1	90	28	18	44	2			
7**	Կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաներ	3	1	90	28	18	44	2			
8*	Գործառնական կառավարում	5	2	150	52	18	80		4		
9**	Առաջնորդում և կոնֆլիկտների կառավարում	4	2	120	28	18	74		2		
10*	Մարդկային ռեսուրսների կառավարում	4	3	120	52	12	56			4	

11*	Ռազմավարական կառավարում	5	3	150	52	18	80			4	
12*	Նախագծերի կառավարում	5	3	150	52	18	80			4	
13**	Ֆինանսական կառավարում և հանրային ֆինանսներ	4	3	120	52	12	56			4	
2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	14		420	160	60	200	0	10	2	0
14**	Կառավարչական վերլուծությունների գործիքակազմ	3	2	90	28	18	44		2		
15	Հանրային քաղաքականության վերլուծություն և պլանավորում	4	2	120	52	12	56		4		
16	Հանրային իրավունք	4	2	120	52	12	56		4		
17**	Որակի կառավարում	3	3	90	28	18	44			2	
3	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	11		330	112	44	174	2	4	2	0
18	Կառավարչի հաղորդակցման հմտություններ (անգլերենով)	2	1	60	28	4	28	2			
19	Կառավարչի հաղորդակցման հմտություններ (անգլերենով)	2	2	60	28	4	28		2		
20	Կամրնտրական 1. Պետական անվտանգություն և կայունություն	4	2	120	28	18	74		2		
21**	Կամրնտրական 2. (մասնագիտությունից)	3	3	90	28	18	44			2	
4	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	40		1200	80	136	984	0	4	4	0
22	Հետազոտության մեթոդները սոցիալական գիտություններում	4	2	120	52	12	56		4		
23	Գիտական շարադրանքի մեթոդներ	2	3	60	28	4	28			2	
24	Գիտական սեմինար (մագիստրոսական թեզի նախապատրաստում)	2	3	60	0	60	0			2	
25	Հետազոտական պրակտիկում	2	3	60	0	30	30				
26	Մասնագիտական պրակտիկա	10	4	300	0	30	270				
27	Մագիստրոսական թեզի պաշտպանություն (ամփոփիչատեստավորում)	20	4	600	0	0	600				
		120		3600	932	456	2212	24	24	24	

*Տվյալ առարկաների համար կիսամյակի ընթացքում նախատեսվում է 6 ժամ էլեկտրոնային ուսուցում:

**Տվյալ առարկաների համար կիսամյակի ընթացքում նախատեսվում է 14 ժամ էլեկտրոնային ուսուցում:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ՝ ՆԿԱՐԱԳՐԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	15	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	35	Ամփոփիչ գնահատում (խմբային աշխատանքների ներկայացում)
	Բ4	25	Անհատական աշխատանքի ներկայացում (պաշտպանությամբ)

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝

Անգլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու և սովորելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կառավարում» դասընթացը հիմնվում է կառավարման տեսությունների, հասկացությունների ու գործընթացների վերաբերյալ հակիրճ ակնարկի վրա և միտված է կառավարչական հմտությունների զարգացմանը: Կառավարումը մարդկանց կենսագործունեության կարևորագույն բաղադրիչներից է: Կառավարչի գործունեության զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր կառավարիչ տիրապետի կառավարչական գիտելիքների և հմտությունների: Դասընթացի նպատակներից է փոխանցել ուսանողներին մասնագիտական գիտելիքներ, զարգացնել մասնագիտական հմտություններ և ներկայացնել կառավարման զարգացման համատեքստն ու գլոբալ զարգացումները: Դասընթացի ժամանակ նաև քննարկվելու են կառավարման գործառույթները, որոնք հնարավորություն կտան ապագա կառավարիչներին

¹ Դասընթացների նկարագրերի ընդայնված տարբերակը հասանելի է ԲՊՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնում:

հասկանալու, իրատեսական որոշումներ կայացնելու, գնահատելու այդ որոշումների արդյունավետությունը և վերահսկելու գործողությունները: Դասընթացի առանցքային խնդիրն է ոչ միայն ուսանողներին ներկայացնել կառավարման ոլորտի հիմնարար հասկացություններն ու մոտեցումները, այլև հնարավորություն տալ նրանց ուսումնասիրելու և վերհանելու նորարարական գաղափարներ ու լուծումներ: Այս դասընթացը ներկայացնում է տարբեր կառավարման տեսության ժանրեր և ոճեր՝ շեշտադրելով տեսական և գործնական բաղադրիչների յուրացումը:

Դասընթացի նպատակներն են՝

- ✓ տրամադրել կառավարման ոլորտի առանցքային գիտելիքները՝ ապահովելով հետևյալ վերջնարդյունքները՝
 - փոխանցել ուսանողներին կառավարման տեսության հիմնադրույթների և կառավարման առանցքային հասկացությունների վերաբերյալ գիտելիքներ,
 - ցուցաբերել կառավարման ոլորտի տեսությունների, գործառնությունների և առանցքային հասկացության շրջանակի իմացություն,
 - վերլուծել կառավարման ոճերը՝ կառավարչական բարդ որոշումներ կայացնելու նպատակով,
 - տիրապետել կառավարման ընդհանրական գործիքներին
 - կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և դրանք ծառայեցնել կառավարչական որոշումների կայացմանը:
- ✓ զարգացնել առաջնորդման, մոտիվացման, հաղորդակցման, ժամանակի կառավարման և թիմային աշխատանքի հմտությունները՝ ապահովելով հետևյալ վերջնարդյունքները՝
 - կիրառել առաջնորդման և կառավարչական հմտությունները՝ դրանք գործադրելով թիմային արդյունավետ աշխատանքներ իրականացնելու համար,
- ✓ զարգացնել ստեղծագործական և քննադատական մտածողությունը կառավարման ոլորտի շրջանակում՝ ապահովելով հետևյալ վերջնարդյունքները՝
 - ուսումնասիրել և քննադատորեն վերլուծել կառավարչական խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկություններն ու տվյալները,
 - կիրառել կառավարման ոլորտի միջգիտակարգային առանցքային գիտելիքները կառավարչական տարբեր իրավիճակներում,
 - կիրառել կառավարչական և հետազոտական հմտություններն ու կարողությունները տեղական/ազգային և միջազգային սոցիալ-տնտեսական համատեքստերում:

Դասընթացի անվանում	Հանրային կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	15	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	35	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	25	Ուսումնասիրություն/անհատական աշխատանք (պաշտպանություն)

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝

Անգլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացի նպատակն է ներկայացնել հանրային կառավարման տեսական հիմնահարցերը, պետության ծագման և զարգացման հիմնադրույթները՝ հիմք ստեղծելով կառավարման ժամանակակից ոլորտի ըմբռնման համար: Հանրային կառավարումը հասարակական գիտությունների ճյուղ է:

«Հանրային կառավարում» դասընթացը հիմնվում է հանրային կառավարման տեսությունների և հասկացությունների վերաբերյալ հակիրճ ակնարկի վրա: Դասընթացի նպատակն է ներկայացնել հանրային կառավարման տեսական հիմնահարցերը, պետության ծագման ու պետականության զարգացման հիմնադրույթները՝ հիմք ստեղծելով հանրային կառավարման ժամանակակից ոլորտի ըմբռնման համար: Դասընթացի նպատակներից է տրամադրել ուսանողներին գիտելիքներ և ներկայացնել հանրային կառավարման զարգացման համատեքստը և գլոբալ զարգացումները: Դասընթացի ժամանակ նաև ուշադրություն կդարձվի կառավարման գործառույթներին, որոնք հնարավորություն կտան ապագա հանրային կառավարիչներին հասկանալ, իրատեսական որոշումներ կայացնել և վերահսկել գործողությունները: Դասընթացի առանցքային խնդիրն է ոչ միայն ուսանողների՝ նոր հասկացություններն ու մոտեցումները հասկանալը, այլև նոր մտահորիզոնների ուսումնասիրումը, նորարարական գաղափարների և լուծումների վերհանումը: Այս դասընթացը ներկայացնում է տարբեր կառավարման տեսության ժանրեր՝ շեշտադրելով տեսական և գործնական բաղադրիչների յուրացումը:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

«Հանրային կառավարում» դասընթացի նպատակներն են՝

1. տրամադրել ընդհանուր գիտելիքներ պետության առաջացման, ձևավորման, կայացման և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ, պատկերացում կազմել պետության և պետականության հիմնական ինստիտուտների, պետաիրավական կարևորագույն կատեգորիաների բովանդակության վերաբերյալ,
2. ներկայացնել պետական և հանրային կառավարման արդյունավետության մեթոդաբանությունը և չափանիշները,
3. տրամադրել արդյունավետության տեսական գիտելիքները՝ կիրառելով պետական կառավարման համակարգի արդյունավետությունը գործնական գնահատման գործընթացում,
4. ներկայացնել հանրային կառավարման գիտակարգի ձևավորման նախադրյալները և զարգացմանը վերաբերող հիմնադրույթները,
5. ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների կառուցվածքն ու հիմնական գործառույթները
6. բացահայտել <հանրային կառավարում> գիտակարգում կատարված հետազոտությունների ծագումն և ներկայացնել բնորոշ ընդհանուր օրինաչափությունները,
7. ուսումնասիրել հանրային կառավարման տեսության և պրակտիկայի արդի հիմնահարցերը՝ անդրադառնալ հանրային կառավարման և մի շարք պատմական և տեսական զարգացումների վերլուծությանը,
8. զարգացնել և ամրապնդել ճանաչողական ու գործառնական փոխանցելի հմտություններ,
9. բարելավել հաղորդակցական և տեղեկատվության հայթայթման, վերլուծության ու ուսումնասիրության հմտությունները,
10. ուսանողների մոտ ձևավորել ժողովրդագրական խնդիրների մասին պատկերացումներ և տրամադրել գիտելիքներ միգրացիոն գործընթացների վերաբերյալ՝ ծանոթացնելով միգրացիոն տեսություններին:

Այս դասընթացի դասավանդումը տարվում է երեք ուղղությամբ՝ գիտելիքների հաղորդում, հմտությունների և կարողությունների ձևավորում: Նոր հասկացություններ և գաղափարներ հաղորդելիս դասախոսը հնարավորություն է տալիս ուսանողներին յուրացնելու դրանք և նպաստելու ուսանողների կողմից դրանց «սեփականացմանը»: Այս դասընթացի տեսական գիտելիքների ընկալումը պահանջում է դասավանդման փոխգործուն և ակտիվ մեթոդներ հանրային կառավարման համակարգը ամբողջությամբ և հիմնովին ըմբռնելու համար:

Դասընթացի անվանում	Ձեռնարկատիրական տնտեսագիտություն
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	20	Ներկայություն / մասնակցություն
	Բ2	40	Միջանկյալ բանավոր գնահատում
	Բ3	40	Անփոփիչ բանավոր գնահատում (անհատական աշխատանքի պաշտպանությամբ)

1. ՆԱՆՏՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

« Ձեռնարկատիրական տնտեսագիտություն առարկան նախատեսված է տարբեր մասնագիտություններով եւ որակավորումներով ուսանողների համար: Առարկայի արդյունավետ յուրացման համար նախնական ձեռնարկատիրական փորձը պարտադիր չէ: Այնուամենայնիվ, առարկայի արդյունավետ յուրացման համար ցանկալի է, որպեսզի ուսանողները՝

1. Տիրապետեն հանրակրթական մակարդակի մաթեմատիկայի,
2. Տիրապետեն միջին եւ բարձր մակարդակի ռուսերենի եւ/կամ անգլերենի,
3. Ունենան ուսանելու եւ ինքնագարգացման ցանկություն:

2. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է ուսանողներին խորացված գիտելիքներ փոխանցել միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության ոլորտներում:

Դասընթացի մեկնարկին ուսանողները կուսումնասիրեն միկրոտնտեսագիտության սկզբունքները, որոնք օգտագործվում են շուկայում սպառողների և ֆիրմայի վարքը վերլուծելու համար: Ուսանողները կձանոթանան պահանջարկի և առաջարկի վերլուծության հայեցակարգերն և գործիքներին, նրանք կուսումնասիրեն, թե ինչպես են գնորդները և վաճառողները փոխառնչվում գործարքի գները և քանակները որոշելու համար: Ուսանողները կձանոթանան սպառողի մասին տեսությանը, որը վերաբերում է անհատների կողմից ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկին, ովքեր որոշումներ են կայացնում ներկա և ապագա սպառումից իրենց բավարարվածությունը մաքսիմալացնելու համար: Այնուհետև ուսանողները կուսումնասիրեն ֆիրմայի մասին տեսությունը՝ ապրանքների և ծառայությունների առաջարկը շահույթ մաքսիմալացնող ֆիրմաների կողմից: Ուսանողները կձանոթանան եկամուտներին և դրանց տեսակներին, ինչպես նաև շուկաների տեսակներին, որոնցում ֆիրմաները վաճառում են իրենց արտադրանքը: Ընդհանուր առմամբ դասընթացի այս բաժինը միտված է ուսանողների իմացությանը, թե ինչպես են գործում ապրանքային և ծառայության շուկաները և տարբեր ճյուղերի մրցակցային բնութագրիչները:

Դասընթացի միկրոտնտեսագիտության հատվածին կհաջորդի մակրոտնտեսագիտության հատվածը, որը ներառում է հիմնարար մակրոտնտեսական հայեցակարգեր: Ուսանողները կուսումնասիրեն ընդհանուր թողարկման և եկամտի հաշվարկման, ընդհանուր պահանջարկի և առաջարկի վերլուծության, և տնտեսական աճի վրա ազդող գործոնների վերաբերյալ հիմնարար սկզբունքներին: Դասընթացի այս հատվածը բացատրում է տնտեսական գործունեության տատանումները, որոնք կարևոր ազդեցություն ունեն գործարարության և ներդրումային շուկաների վրա: Այնուհետև ուսանողները կձանոթանան դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններին, և թե ինչպես են դրանք օգտագործվում կենտրոնական բանկերի և կառավարությունների կողմից մեղմացնելու համար տնտեսական տատանումների բացասական հետևանքները և այլ նպատակների հասնելու համար:

Դասընթացի անվանում	Կրթության կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն, մասնակցություն և խմբային աշխատանք
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	35	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	30	Ռեֆերատ

<p>1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝</p> <p>Անզլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:</p>
<p>2. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կրթության բարեփոխումները կրթության միջազգայնացման և գիտելիքահենք տնտեսության զարգացման արդյունքներն են: Առաջնորդվելով գիտելիքահենք տնտեսության հիմնական պահանջներով, ինչպիսիք են, օրինակ, նորարարական և ստեղծագործ մարդկային կապիտալի զարգացումը, հետազոտական արտադրանքի ստեղծումը՝ ներառյալ գիտակրթականը, ազգային և միջազգային աշխատաշուկաներում դառնում է առանցքային հիմնախնդիր: Ազգային աշխատաշուկայի հնարավոր ընդլայնման և միջազգային աշխատաշուկաների և պահանջների հետ վերջինիս համադրելիության աճող միտումները հանգեցնում են կրթության ոլորտում կառավարման ճկունության պահանջին: Հետևապես, առանցքային խնդիրն ոչ միայն բուհերի գոյատևումն է և կրթական ծառայությունների մատուցումը, այլ նաև կրթության կառավարման և կրթական ծրագրերի կազմակերպման արդյունավետությունն ու գործունակությունը և վերջնարդյունքների արժևորումն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Լինելով հարթակ ստեղծագործ և մտավոր ներուժի զարգացման համար՝ կրթական հաստատությունները ունեն գործառույթներ և հասարակական պատասխանատվության իրենց մասնաբաժինը կրթական արտադրանքի մշակման գործում: Այս համատեքստում, տվյալ դասընթացը նախատեսված է կառավարչական հմտություններին տիրապետող կրթության մասնագետների պատրաստմանը նախնական, ընդհանուր (միջնակարգ), բարձրագույն կրթության ոլորտներում՝ բարձրագույն և մասնագիտական կրթությունը ներառյալ: Դասընթացը նվիրված է Հայաստանում կրթության</p>

ուղորտի կառավարման առանձնահատկություններին, այդ համակարգերի գործունեությունը կարգավորող օրենսդրությանը, այդտեղ իրականացվող պետական քաղաքականության սկզբունքներին, բարեփոխումներին, դպրոցի և քոլեջի կառավարման ժամանակակից ձևերին, սկզբունքներին ու մեթոդներին: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները և հմտությունները նպաստում են ուսանողի մագիստրոսական գիտելիքների խորացմանը, ինքնավերլուծությանը, աշխարհայացքի ընդլայնմանը, մտածելակերպի հարստացմանը:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է ապահովել բարձրագույն կրթության կառավարման ոլորտին վերաբերող հասկացությունների խորացված ըմբռնումը և զարգացնել հմտություններ կրթական միջավայրում դրանց կիրառման համար: Հիմնական նպատակներից մեկն է ներկայացնել կրթության կառավարումը և կրթության բարեփոխումները՝ մասնավորապես Բոլոնյան գործընթացի համատեքստում բարձրագույն կրթության բարեփոխումները, ինչպես նաև զարգացնել հմտություններ ու փոխանցել գիտելիքները կրթության կառավարման համակարգային մոտեցումների և հիմնական բաղադրիչների, ինչպես նաև ազգային և միջազգային կրթական համակարգերի առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացի նպատակն է նաև ուսանողներին ծանոթացնել Հայաստանում կրթության ոլորտի կառավարման համակարգի առանձնահատկություններին և այդ բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներին, օրենսդրական կարգավորումներին, կրթության զարգացման ռազմավարական գերակայություններին, կրթության ոլորտում վերջին տարիներին իրականացված բարեփոխումներին և կրթության միջազգայնացման գործընթացներին:

Դասընթացի խնդիրներն են՝

- ընդհանուր պատկերացում ունենալ կրթության ազգային համակարգի և կրթության կառավարման հիմնական սկզբունքների, էության և դրույթների (ներառյալ կրթության տարբեր մակարդակների) վերաբերյալ,
- ուսումնասիրել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի խնդիրները և առկա հիմնախնդիրները ու վերլուծել դրանք ոլորտային բարեփոխումների և Բոլոնիայի սկզբունքների կիրառման տեսանկյունից,
- ուրվագծել Հայաստանում կրթական բարեփոխումների առաջնահերթությունները և ըստ այդ ռազմավարությունների վերլուծել գործնական դաշտում առկա խնդիրները և դրանց բարելավման ուղիները,
- հասկանալ կրթական քաղաքականությունների զարգացումն ու պատմությունը և տարբեր քաղաքականությունների հնարավոր ազդեցություններն ազգային և միջազգային կրթության համակարգերի ու կառավարման մեխանիզմների վրա,
- ուսանողների մոտ սեփական կարծիք ձևավորել դպրոցի կառավարմանը ներկայացվող ժամանակակից պահանջների մասին.
- ուսանողների մոտ ձևավորել համակարգի խնդիրները որոշարկելու ու դրանց հնարավոր լուծումներ գտնելու պարզագույն կարողություններ:

Դասընթացի անվանում	Շուկայագիտություն
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	20	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	40	Միջանկյալ բանավոր գնահատում (անհատական աշխատանքի պաշտպանությամբ)
	Բ3	40	Ամփոփիչ բանավոր գնահատում (թիմային աշխատանքի պաշտպանությամբ)

ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Ռուսերենի և/կամ անգլերենի իմացություն, քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել: Այս դասընթացի արդյունավետ յուրացման համար ուսանողները պետք է՝

- ունենան ինքնուրույն, վերլուծական-քննադատական մտածողություն և սեփական տեսակետը հիմնավորելու կարողություն,
- ակտիվորեն ներգրավված լինեն դասընթացի շրջանակում իրականացվող քննարկումներին և սեմինարներին,
- տիրապետեն ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներին՝ մասնագիտական գրականության, անհատական և թիմային աշխատանքների կատարման արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տվյալներ որոնելու և դրանք նպատակային կերպով կիրառելու նպատակով,
- տիրապետեն անհատական և թիմային աշխատանքների կատարման սկզբունքներին:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացի ուսումնասիրությունն ուղղված է մարքեթինգի մասին ամբողջական պատկերացման ձևավորմանը և դրա կիրառմանը պրակտիկ գործունեության մեջ: Դասընթացով նախատեսվում է ուսումնասիրել ժամանակակից մարքեթինգային հայեցակարգը, մարքեթինգի ռազմավարությունների և ծրագրերի մշակման սկզբունքները, կազմակերպության ապրանքային, գնային, իրացման և կոմունիկացիոն քաղաքականության ձևավորման հիմունքները, տարբեր շուկաներում մարքեթինգային գործունեության առանձնահատկությունները:

3 Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է մարքեթինգի հայեցակարգի յուրացումը՝ որպես մարքեթինգային գործունեության հիմնական գաղափարների և դրույթների համակարգ:

Դասընթացի հիմնական խնդիրներն են.

- ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ մարքեթինգի բնույթի և դերի /մարքեթինգի գործընթացի գաղափարական հիմունքները, վաճառողների և գնորդների միջև փոխանակության ու կոմունիկացիայի կազմակերպումը/, մարքեթինգային վերլուծության առարկայի և օբյեկտների /մակրո- և միկրոմիջավայրը, իրավիճակի վերլուծությունը/ մասին,

- ուսանողների մոտ ձևավորել պատկերացում մարքեթինգի համալիրի՝ որպես մարքեթինգային գործունեության կառավարման գործիքների ամբողջության /կազմակերպության ապրանքային, գնային, իրացման և կոմունիկացիոն քաղաքականություն/ վերաբերյալ:

Դասընթացի անվանում	Կառավարչական հմտություններ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	30	Գործնական աշխատանքների գնահատում
	Բ4	30	Ամփոփիչ ստուգում և գնահատում

<p>1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)</p> <p>«Կառավարչական հմտություններ» դասընթացը արդյունավետ յուրացնելու համար ուսանողը պետք է՝</p> <ul style="list-style-type: none"> • ունենա տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետման ընդհանուր հմտություններ՝ մասնագիտական գրականության, անհատական և թիմային աշխատանքների կատարման արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տվյալներ որոնելու և դրանք նպատակային կերպով կիրառելու նպատակով, • ունենա հայերեն բանավոր և գրավոր խոսքի գերազանց իմացություն, • ունենա անգլերենի բավարար իմացություն (առնվազն B2 մակարդակ՝ ըստ Լեզուների իմացության համակարգի շրջանակի), քանի որ առկա մասնագիտական գրականության և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքների գերակշիռ մասը հասանելի են այլեզուներով, • ունենա ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ, • ակտիվորեն ներգրավված լինի դասընթացի շրջանակում իրականացվող քննարկումներին: <p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ</p> <p>Դասընթացը հիմնականում նախատեսված է կառավարման, հանրային կառավարման, կրթության կառավարման կամ նմանատիպ ոլորտներում մասնագիտացող ուսանողների համար: Մասնավորապես, դասընթացը.</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնում է ցանկացած կազմակերպության համար առանցքային նշանակություն ունեցող ոլորտներ (էթիկական որոշումների կայացում, առաջնորդություն, թիմային աշխատանք, մոտիվացիա և այլն), ուսանողների մոտ ձևավորում է ժամանակակից կառավարչին անհրաժեշտ այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցման հմտություններ, թիմային աշխատանք իրականացնելու, որոշումներ

կայացնելու, աշխատակիցներին մոտիվացնելու, ինքնակատարելագործման, առաջնորդության, կազմակերպական կոնֆլիկտների, փոփոխությունների, ժամանակի կառավարման և ստեղծարար աշխատանքի հմտությունները,

- անդրադառնում է կազմակերպությունների կառավարման և որոշումների կայացման գործընթացներում կառավարչական հմտությունների կարևորությանը, վերջիններիս շարունակական զարգացման ու կատարելագործման անհրաժեշտությանը,
- մասնավորեցնում է կառավարչական հմտությունների ու մեթոդների նպատակային ու համալիր կիրառման առանցքային նշանակությունը՝ կազմակերպությունների կառավարման սկզբունքները ձևավորելու ու կիրառելու, գործունեության արդյունավետությունն ապահովելու, ղեկավարների ու կառավարիչների սեփական կատարողականը գնահատելու ու մրցունակությունն ապահովելու գործառույթներում:

3. *Դասընթացի նպատակն ու խնդիրները*

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ցանկացած կազմակերպության համար առանցքային նշանակություն ունեցող ոլորտների (էթիկական որոշումների կայացում, առաջնորդություն, թիմային աշխատանք և մոտիվացիա, ժամանակի կառավարում, կոնֆլիկտների կառավարում և այլն) վերաբերյալ, ինչպես նաև փոխանցել ժամանակակից կառավարչին անհրաժեշտ փոխանցելի հմտություններ:

Խնդիրները՝

- զարգացնել անհատական, միջանձնային և խմբային աշխատանքների հմտություններ, որոնք անհրաժեշտ են տարբեր կազմակերպչական համատեքստերում անձնական և մասնագիտական վարքը դիտարկելու, քննելու, կառավարելու և բարելավելու համար,
- զարգացնել ինքնագնահատականին, ինքնարդյունավետությանը, կարիերայի առաջխաղացմանն առնչվող հմտություններ, որոնք խիստ էական են բարձր աշխատանքային արտադրողականության և կատարողականի համար,
- ներկայացնել խնդրի լուծման հմտություններ և մոտեցումներ՝ ներառյալ խնդիրը որոշելը, կարիքների գնահատումը, ինչպես նաև տարբեր խնդիրներին լուծում տալը՝ այլընտրանքային տարբերակների և ազդեցությունների գնահատման միջոցով,
- զարգացնել քննադատական մտածողության հմտություններ և իրական դեպքերն ու խնդիրները դիտարկել այնպիսի տեսանկյուններից, որոնք կապահովեն մրցունակ նորարարություններ,
- քննարկել անձնական ինքնագիտակցությանը և հաղորդակցման ընդհանուր վերլուծությանը վերաբերող հիմնական հասկացություններ և մեթոդներ,
- նկարագրել ժամանակի, կազմակերպության շրջանակներում սթրեսի և կոնֆլիկտների կառավարմանն առնչվող մոդելներ ու հաջողված փորձի օրինակներ,
- ցուցադրել միջանձնային և խմբային հաղորդակցման գիտելիք և հմտություններ, կիրառել

հաղորդակցական տարբեր մոտեցումներ խնդիրների լուծման նպատակով տարբեր լսարանների հետ աշխատանքներում՝ ինչպես անհատական, այնպես էլ խմբային իրադրություններում,

- զարգացնել աշխատանքի մեջ տարբեր համագործակցային գործելակերպերի ներմուծման և կիրառման հմտությունները,
- ներկայացնել կառավարման հմտություններ, որոնք կարևոր են մասնագիտական հաջողությունների համար՝ ներառյալ հաղորդակցությունը, կոնֆլիկտների կառավարումը և զգացմունքային բանականությունը,
- բարելավել տեղեկատվության հայթայթման և վերլուծման հմտությունները,
- զարգացնել հետազոտական աշխատանքներ կատարելու և ակադեմիական շարադրանքի կարողությունները,
- բարելավել անհատական աշխատանքի արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և մեկնաբանելու կարողությունները,
- բարելավել արդյունավետ որոշումներ կայացնելու հմտությունները:

Դասընթացի անվանում	Կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաներ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	20	Ներկայություն և մասնակցություն
	F2	40	Միջանկյալ գնահատում (թիմային գործնական աշխատանք՝ պաշտպանությամբ)
	F3	40	Ամփոփիչ գնահատում (անհատական գործնական աշխատանք՝ պաշտպանությամբ)

4. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)

Անգլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել, ունենա տարրական համակարգչային գիտելիքներ, հմտություններ և կարողություններ (Microsoft Word, Excel, PowerPoint):

Այս դասընթացի արդյունավետ յուրացման համար ուսանողը պետք է՝

- ունենա ինքնուրույն, վերլուծական-քննադատական մտածողություն և փաստարկումներով սեփական տեսակետը հիմնավորելու կարողություն,
- ակտիվորեն ներգրավված լինի դասընթացի շրջանակում իրականացվող քննարկումներին և սեմինարներին,
- տիրապետի անհատական և թիմային աշխատանքների կատարման ակադեմիական և էթիկական սկզբունքներին,
- տիրապետի ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին՝ մասնագիտական գրականության, անհատական և թիմային աշխատանքների կատարման արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տվյալներ որոնելու և դրանք նպատակային կերպով կիրառելու համար:

5. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Որոշումներ կայացնող ցանկացած մակարդակի կառավարիչ հիմնվում է միայն կառավարման ոլորտի վերաբերյալ իրեն հասանելի տեղեկատվության վրա: Այդ տեղեկատվության որակական բնութագրերով է պայմանավորված նրա աշխատանքի արդյունավետությունը: Ժամանակակից

պայմաններում տեղեկատվական համակարգերը և տեխնոլոգիաները մեծ դերակատարում ունեն կազմակերպության մարտավարական և ռազմավարական նպատակների սահմանման և իրականացման գործում: Այն իր հետ բերում է նոր պահանջներ ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի, այնպես էլ դրանց գործառույթների նկատմամբ: Դրանք չեն կարող մնալ պարզապես գործիքներ կամ համակարգեր, որոնք ապահովում են տեղեկատվության մշակումը և պահպանումը կազմակերպության ներսում, քանի որ նոր տեղեկատվական համակարգերը և տեխնոլոգիաները իրենք են թելադրում կազմակերպության կառավարման իրենց յուրահատուկ պայմանները և անբաժան մասն են դառնում կազմակերպական մշակույթի ձևավորման և զարգացման հարցում:

Դասընթացն իրականացվում է դասախոսությունների և ուսուցման ինտերակտիվ մեթոդների համակցմամբ՝ ներառելով անհատական և թիմային գործնական աշխատանքների կատարում ու վերլուծություն, կառավարման և հարակից ոլորտներին առնչվող մի շարք գործիքների ներկայացում և տիրապետում

6. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է ընդհանուր համակարգային պատկերացում տալ տեղեկատվության, ժամանակակից տեխնոլոգիաների և համակարգերի, դրանց զարգացման պատմության, հասարակության և տնտեսության վրա դրանց ազդեցության, կազմակերպությունում դրանց կիրառման մեթոդաբանության մասին: Դասընթացում ներառված յուրաքանչյուր թեմա իրենից ներկայացնում է կառավարման մեջ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման բավական մեծ և ինքնուրույն առարկայական ոլորտ:

Դասընթացի խնդիրներն են.

1. ծանոթացնել կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների տերմինոլոգիական հենքին և հասկացութային ապարատին,
2. ներկայացնել կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման էությունը, մեթոդները, բաղադրիչներն ու տեսակները,
3. ծանոթացնել և կիրառել կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների արդի համակարգերը և գործիքները,
4. ուսանողներին տալ գաղափարներ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ու ինֆորմացիոն համակարգերի, դրանց աշխատանքային սկզբունքների, ինչպես նաև մարդկային գործունեության տարբեր ոլորտներում կիրառության վերաբերյալ:

Դասընթացի անվանում	Գործառնական կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրոս
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	15	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	35	Միջանկյալ քննություն
	Բ3	15	Ինքնուրույն աշխատանք
	Բ4	35	Ամփոփիչ քննություն

<p>1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝</p> <p>Գործառնական կառավարում առարկան նախատեսված է տարբեր մասնագիտություններով և որակավորումներով ուսանողների համար: Առարկայի արդյունավետ յուրացման համար նախնական կառավարչական փորձը պարտադիր չէ:</p> <p>Այնուամենայնիվ, առարկայի արդյունավետ յուրացման համար ցանկալի է, որպեսզի ուսանողները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Տիրապետեն հանրակրթական մակարդակի մաթեմատիկայի, 2. Տիրապետեն միջին և բարձր մակարդակի անգլերենի, 3. Ունենան ուսանելու և ինքնազարգացման ցանկություն:
<p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ</p> <p>Ինքնուրույն աշխատանքի թեմաներ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Գործարար մոդելի ձևանմուշի կազմման մեթոդաբանությունը 2. Գործարար ծրագրի կազմման մեթոդաբանությունը 3. Արժեշտի կառավարում 4. Գործառնական կառավարման և նախագծերի կառավարման գործընթացների համեմատական վերլուծություն 5. Մատակարարման շղթայի կառավարում 6. Պաշարների կառավարում 7. Ճիշտ ժամանակին հումքի մատակարարման մեխանիզմը 8. Արտապատվիրում 9. Գործառնական ռիսկերի կառավարումը 10. Որակի կառավարման և հաճախորդների բավարարվածության միջև կապը 11. Պաշարների կառավարումը Էլեկտրոնային առևտրի պարագայում 12. Գնումների կառավարումը 13. Կազմակերպության գործառնական ռազմավարությունը 14. Արտադրական շղթաների կառավարումը

15. Գործընթացների կառավարումը գործառնական կառավարման շրջանակում
16. Պրոդուկտների կառավարումը գործառնական կառավարման շրջանակում
17. Ծառայությունների մատուցման կազմակերպումը
18. Նպատակների և հիմնական արդյունքների (OKR) համակարգը
19. Նորամուծությունների կառավարումը
20. Կառավարչական որոշումների կայացումը գործառնական կառավարման շրջանակում
21. Ֆինանսական պլանավորումը գործառնական կառավարման շրջանակում
22. Արտադրողականության և արդյունավետության միջև կապը գործառնական կառավարման շրջանակում
23. Ռազմավարական կառավարման և գործառնական կառավարման միջև կապը
24. Որակի կառավարումը գործառնական կառավարման շրջանակում

Դասընթացի անվանում	Առաջնորդում և կոնֆլիկտների կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գնահատում
	Բ3	30	Թիմային աշխատանք /պաշտպանությամբ/
	Բ4	30	Ամփոփիչ գնահատում

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ ընդհանուր գիտելիքների բազա և հմտություններ)

Այս դասընթացն առավելագույնս արդյունավետ յուրացնելու համար ուսանողները պետք է՝

- ❖ կարողանան ինքնուրույն և վերլուծաբար մտածել ու փաստարկումներով հիմնավորեն սեփական տեսակետը,
- ❖ ծանոթ լինեն կառավարման ոլորտին առնչվող հիմնական տեսական դրույթներին ու սկզբունքներին,
- ❖ ապահովեն արդյունավետ ներգրավվածություն դասընթացի շրջանակում իրականացվող քննարկումներին և բանավեճերին,
- ❖ տիրապետեն անհատական և թիմային աշխատանքների կատարման ակադեմիական ու էթիկական սկզբունքներին,
- ❖ տիրապետեն ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներին՝ անհատական և թիմային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ փնտրելու և դրանք նպատակային կերպով կիրառելու նպատակով,
- ❖ B1/B2 մակարդակով (ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)) տիրապետեն օտար լեզուներին (հիմնականում՝ անգլերեն/ռուսերեն)՝ սույն դասընթացի բովանդակային շրջանակում պարտադիր ընթերցանության և լրացուցիչ մասնագիտական գրականությունից օգտվելու համար:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը կազմված է դասախոսություններից, ներկայացումներից, խմբային քննարկումներից և գործնական վարժանքներից: Դասընթացն իրականացվում է միջգիտակարգային մոտեցմամբ՝ ընդգրկելով առաջնորդման և կոնֆլիկտների կառավարման գիտակարգերի փոխկապակցված ուսումնասիրումն ու վերլուծությունը:

Դասընթացի **առաջին մասում** ներկայացվում և քննարկվում են առաջնորդման

հասկացութային շրջանակը՝ սահմանումները, հիմնական հասկացությունները, առաջնորդման դասական և ժամանակակից տեսությունները, ոճերն ու ձևերը, տարբեր մոտեցումներն ու տեսակետները: Առաջնորդման վերաբերյալ տեսական հիմքերի ամրապնդման նպատակով քննարկվում են նաև առաջնորդների և կառավարիչների գործունեության/մասնագիտական և անձնական որակների հիմնական տարբերությունները, համընդհանրությունները, քննարկումներով դուրս են բերվում առանցքային հետևությունները:

Դասընթացի **երկրորդ մասը**, համակցվելով առաջնորդման ոլորտի ընդհանուր շրջանակին, ներառում է կոնֆլիկտների կառավարման ոլորտը՝ շեշտադրելով առաջնորդների գործունեության արդյունավետության ապահովման խնդրում կոնֆլիկտների կառավարման առանցքային գործառույթն ու նշանակությունը: Քննարկվում են կոնֆլիկտների կառավարման տեսությունները, կառուցվածքն ու փուլերը և կոնֆլիկտների հանգուցալուծման մեթոդները:

Դասընթացը ներառում է առաջնորդման և կոնֆլիկտների կառավարման ոլորտներին առնչվող հիմնախնդիրների, տեսությունների/գիտական դպրոցների և տարբեր մոտեցումների լայն շրջանակը, որի յուրացումն ինտերակտիվ քննարկումների, գործնական աշխատանքների ու բանավեճերի միջոցով թույլ է տալիս ուսանողներին ձևավորել և ինքնուրույն ընտրել սեփական համոզմունքներին համապատասխան դիրքորոշում՝ հիմնվելով ձեռքբերված ոլորտային գիտելիքների վրա և փաստարկվածությամբ հիմնավորելով սեփական տեսակետը:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է օժանդակել ուսանողներին ձեռք բերելու առաջնորդման և կոնֆլիկտների կառավարման ոլորտի գիտելիքներ, բացահայտել ու զարգացնել առաջնորդման որակներ ու հմտություններ՝ նրանց հնարավորություն տալով արդյունավետ դարձնելու իրենց առկա և հետագա աշխատանքային գործունեությունը կառավարման ոլորտում: Միջգիտակարգային մոտեցմամբ, տեսական ու գործնական բաղադրիչների համադրությամբ կազմված այս դասընթացը հնարավորություն կտա ուսանողներին հիմնովին պատկերացում կազմելու և մեկնաբանելու առաջնորդման և կոնֆլիկտների կառավարման ոլորտների փոխկապակցվածությունն ու տարբերությունները, առանձնահատկությունները, ինչպես նաև փնտրելու և գտնելու կառավարման ոլորտի և իրավիճակային խնդիրների լուծման եղանակներ:

Դասընթացի նպատակից բխող խնդիրներն են՝

1. ուսանողներին ծանոթացնել առաջնորդման և կառավարման, ներառյալ կոնֆլիկտների կառավարման գիտակարգերի մեթոդաբանական հենքին՝ հաղորդելով գիտական դպրոցների ու տեսությունների, կառավարման և առաջնորդման ոլորտի հասկացութային շրջանակն ընդգրկող գիտելիքներ,
2. բացահայտել կառավարման և առաջնորդման համընդհանրություններն ու տարբերությունները,
3. ուսումնասիրել կառավարման և առաջնորդման ոլորտներում կառավարիչների/առաջնորդների դերն ու առանցքային գործառութային շրջանակը,
4. ուսումնասիրել կոնֆլիկտների կառավարման մեթոդաբանական հենքը, ներառյալ առնչվող գիտակարգի/գիտական դպրոցների ձևավորման և զարգացման փուլերը, առաջադրված մոտեցումները
5. բացահայտել առաջնորդման ֆունկցիոնալ և դիսֆունկցիոնալ մոդելները
6. ուսումնասիրել կոնֆլիկտի կառուցվածքը, փուլերն ու կոնֆլիկտների հանգուցալուծման մեթոդները
7. գործնականացնել ձեռքբերված գիտելիքը կառավարման ավանդական և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ՝ քննարկելով առաջնորդների դերն ու գործառութային արդյունավետ իրականացման հնարավորությունները կառավարման, ներառյալ կոնֆլիկտների կառավարման ոլորտում:

Դասընթացի անվանում	Մարդկային ռեսուրսների կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	10	Ներկայություն և մասնակցություն
	F2	30	Միջանկյալ գնահատում
	F3	30	Խմբային աշխատանք /պաշտպանությամբ/
	F4	30	Ամփոփիչ գնահատում

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ ընդհանուր գիտելիքների բազա և հմտություններ)

Այս դասընթացն առավելագույնս արդյունավետ յուրացնելու համար ուսանողները պետք է՝

- ❖ կարողանան ինքնուրույն և վերլուծաբար մտածել ու փաստարկումներով հիմնավորեն սեփական տեսակետը,
- ❖ ծանոթ լինեն կառավարման ոլորտին առնչվող հիմնական տեսական դրույթներին ու սկզբունքներին,
- ❖ ապահովեն արդյունավետ ներգրավվածություն դասընթացի շրջանակում իրականացվող քննարկումներին և բանավեճերին,
- ❖ տիրապետեն անհատական և խմբային աշխատանքների կատարման ակադեմիական ու էթիկական սկզբունքներին,
- ❖ տիրապետեն ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներին՝ անհատական և խմբային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ փնտրելու և դրանք նպատակային կերպով կիրառելու նպատակով,
- ❖ B2 մակարդակով (ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)) տիրապետեն օտար լեզուներին (անգլերեն/ռուսերեն)՝ սույն դասընթացի բովանդակային շրջանակում պարտադիր ընթերցանության և լրացուցիչ մասնագիտական գրականությունից օգտվելու համար:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մարդկային ռեսուրսները (ՄՌ), լինելով ցանկացած կազմակերպության ամենաարժեքավոր ռեսուրսը, արդյունավետ կառավարման կարիք ունեն։ Մարդկային ռեսուրսների կառավարումը (ՄՌԿ) կազմակերպության կառավարման համակարգի անբաժանելի մասն է, որը նպատակաուղղված է կազմակերպության առաքելության իրականացմանը՝ կազմակերպության աշխատողների արդյունավետ գործունեության, խրախուսման ու նրանց կարողությունների շարունակական զարգացման միջոցով:

Մույն դասընթացի բովանդակային շրջանակն ընդգրկում է ՄՌԿ առանցքային հասկացութային ու գործառութային շրջանակները, ՄՌԿ տեսություններն ու մոդելները, ՄՌ ռազմավարական կառավարման մոտեցումներն ու սկզբունքները, ոլորտի արդի հիմնախնդիրները և դրանց լուծման փորձի օրինակները: ՄՌԿ ոլորտի տեսական հենքի վրա դասընթացին կքննարկվեն ՄՌԿ ոլորտին առնչվող արդի հիմնախնդիրները, աշխատանքային հարաբերությունները կարգավորող ազգային օրենսդրական դաշտը և գործնական դաշտում այդ հիմնախնդիրների հնարավոր լուծման տարբերակները:

Դասընթացի շրջանակում շեշտադրվում են ուսանողների ինչպես տեսական գիտելիքների ցուցաբերումը, այնպես էլ դրանց հիման վրա անհատական մոտեցումների ու տեսակետների ներկայացումը, որոնք ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները դեպքերի ուսումնասիրությունների, քննարկումների, տեսախոլովակների դիտման ու քննարկման և ուսուցման ժամանակակից այլ մեթոդների կիրառման միջոցով դարձնում են ընկալելի և գործնականորեն կիրառելի՝ դրանք հնարավորինս մոտարկելով իրական իրավիճակներին և այդպիսով հստակեցնելով ու պարզաբանելով ՄՌԿ ոլորտային շրջանակը: Ուսանողների կողմից առարկայի առավելագույն յուրացումը և գիտելիքների ամրապնդումն ապահովելու համար յուրաքանչյուր դասընթացի մեկնարկին անդրադարձ է կատարվելու նախորդ դասընթացին քննարկված թեմային՝ այդպիսով նաև կապ ստեղծելով քննարկված և ներկայացվելիք թեմաների միջև:

Դասընթացն իրականացվում է միջգիտակարգային մոտեցմամբ՝ ընդգրկելով մարդկային ռեսուրսների կառավարման և (հանրային) կառավարման հարակից ոլորտները: Միջգիտակարգային մոտեցմամբ և տեսական ու գործնական բաղադրիչների համադրությամբ կազմված այս դասընթացը հնարավորություն կտա ուսանողներին հիմնովին պատկերացում կազմելու և մեկնաբանելու ՄՌԿ ոլորտի կարևորությունն ու բնույթը, վերլուծելու ոլորտային առանձնահատկությունները, տեսական գիտելիքների և դրանց ամրապնդմանն ուղղված գործնական աշխատանքների միջոցով բացահայտելու ՄՌԿ արդի հիմնախնդիրները, ինչպես նաև փնտրելու և գտնելու դրանց լուծման հնարավոր ուղիներ:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս դասընթացի ընդհանուր նպատակն է փոխանցել հիմնարար գիտելիքներ մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) գիտակարգի և կառավարման ոլորտի հետ ՄՌԿ-ի փոխկապակցվածության վերաբերյալ, ինչպես նաև ՄՌԿ ոլորտի տեսական առանցքային դրույթների իմացության հիման վրա զարգացնել վերլուծական հմտություններ ու կարողություններ, որոնք անհրաժեշտ են հանրային կառավարման և հարակից ոլորտներում մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Մասնավորապես, դասընթացի **նպատակներն են՝**

1. ուսանողների շրջանում ձևավորել ամբողջական պատկերացում կազմակերպության ընդհանուր կառավարման համակարգում ՄՌԿ դերի ու նշանակության, գործառույթների, ՄՌԿ ոլորտին առնչվող իրավական կարգավորումների և ռազմավարական կառավարման ժամանակակից մոտեցումների վերաբերյալ,
2. օժանդակել ուսանողներին ձևավորելու սեփական դիրքորոշում ոլորտային հիմնախնդիրների շուրջ, մեկնաբանելու ու վերլուծելու դրանք, ինչպես նաև առաջադրելու դրանց լուծման ուղիներ՝ կիրառելով կառավարման և ՄՌԿ ոլորտների տեսական հիմնարար գիտելիքների պաշարը,
3. ՄՌԿ ոլորտի գիտելիքների կիրառմամբ զարգացնել ուսանողների կառավարչական հմտությունները կառավարման և ՄՌԿ ոլորտների շրջանակում առաջացած խնդիրներին մասնագիտական ու գործնական լուծումներ տալու, տարբեր կազմակերպություններում ՄՌԿ ոլորտի հիմնախնդիրներն ու մարտահրավերներն ուսումնասիրելու, դրանք մասնագիտորեն վերլուծելու և լուծումներ առաջադրելու

նպատակով:

Դասընթացի նպատակներից բխող խնդիրներն են՝

8. ուսանողներին տրամադրել ՄՌԿ գիտակարգի հիմնական հասկացության շրջանակն ընդգրկող գիտելիքներ, ներառյալ այդ գիտակարգի ձևավորման նախադրյալները, մեթոդաբանական ու տեսական հենքը, ՄՌԿ նպատակներն ու խնդիրները կազմակերպություններում, ՄՌԿ դերն ու կարևորությունը ցանկացած կազմակերպության կառավարման համակարգում և գործունեության արդյունավետության բարձրացման խնդրում,
9. ուսումնասիրել ՄՌԿ հիմնական գործառույթները և դրանց առանձնահատկությունները,
10. բացահայտել, ուսումնասիրել և վերլուծել ՄՌԿ համակարգերի առանձնահատկությունները, ՄՌ ռազմավարական կառավարման հիմնական մոտեցումներն ու մեթոդները,
11. ուսանողներին ծանոթացնել ՄՌԿ ոլորտի ազգային և միջազգային լավագույն փորձի օրինակներին և դրանց շուրջ քննարկումների միջոցով դուրս բերել ՄՌ արդյունավետ կառավարման մոդելները,
12. տարբերակել ՄՌ ավանդական և ռազմավարական կառավարման մոտեցումներն ու ՄՌԿ մոդելները,
13. ուսումնասիրել և վերլուծել ՄՌԿ ոլորտը կարգավորող ազգային օրենսդրական դաշտը և ինստիտուցիոնալ իրավական կարգավորումները՝ դրանք քննարկելով կազմակերպությունների կառավարման արդյունավետության ապահովման տեսանկյուններից:

Դասընթացի անվանում	Ռամավարական կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրոս
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գնահատում(անհատական աշխատանքի պաշտպանությամբ)
	Բ3	30	Թիմային աշխատանք(պաշտպանությամբ)
	Բ4	30	Ամփոփիչ գրավոր գնահատում

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝
 Անգլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ
 Ռազմավարական կառավարումը կազմակերպության գործունեության կառավարման գործընթաց է, որի միջոցով կազմակերպությունն իր ռեսուրսների օգտագործմամբ և սահմանված գործառնությունների ու գործառնությունների գործադրմամբ իրականացնում է սահմանված սահմանված կանոնադրական և ռազմավարական նպատակների իրագործումը՝ գործունեության երկարաժամկետ զարգացումն ու գործունեության ոլորտային դաշտում իր մրցունակությունն ապահովելու նպատակով:
 Շուկայական տնտեսության մրցակցային պայմաններում ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական առումով առանձնահատուկ դեր ու նշանակություն են ստանում մասնագիտական կրթության արդյունավետ կազմակերպման և պլանավորման հիմնահարցերը: Այդ առումով ուսումնական հաստատությունների ռազմավարական կառավարման նկատմամբ համալիր և համակարգված մոտեցումը դառնում է առանցքային խնդիր, որից բխում է սույն դասընթացի արդիականությունը: Դասընթացն անդրադառնում է ռազմավարական պլանավորման հիմնական հասկացություններին և գործնական աշխատանքներին: Այն հնարավորություն է տալիս ծանոթանալու ռազմավարական կառավարման գաղափարին, օգտագործել ռազմավարական մտածելակերպի առավելությունները և ձեռք բերել ռազմավարական պլանավորման որոշակի գործիքներ:
 Դասընթացի հիմնական բաժիններն են՝ իրավիճակի և կազմակերպության կարողությունների գնահատում, ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, կազմակերպության առաքելության և

տեսլականի սահմանում, ռազմավարական նպատակների և գերակայությունների սահմանում, գործողությունների/միջոցառումների պլանավորում, որոշումների կայացման և բարձրագույն ուսումնական հաստատություններում դերակատարների օրինակելի ձևաչափերով ներկայացված համալսարանի կառուցվածքը, կառավարման համակարգը և կրթական միջավայրի վերլուծության մեխանիզմները: Առանձին քննարկվելու են ՀՀ կրթության ոլորտում իրականացվող ռազմավարական պլանավորման օրինակներ և գործնական աշխատանքներ:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է ներկայացնել ռազմավարական կառավարման էությունն ու հիմնական փուլերը, կազմակերպությունների, ներառյալ բուհերի ռազմավարական կառավարման համակարգերն ու հիմնախնդիրները՝ ոլորտային գիտելիքների փոխանցման և մասնագիտական կարողությունների ու համապարփակ հմտությունների զարգացման միջոցով:

Դասընթացի խնդիրներն են՝

- հստակ պատկերացում կազմել ռազմավարական կառավարման գործընթացի, դրա արդյունավետության վրա ազդող միջավայրային գործոնների դերակատարների և շահակիցների մասին,
- ուսումնասիրել ռազմավարական կառավարման հիմնախնդիրները, բաղադրիչներն ու փուլերը, հիմնադրույթները և սկզբունքները,
- վերլուծել և քննարկել ռազմավարական կառավարման ժամանակակից և ավանդական մոտեցումները, կազմակերպությունների, ներառյալ բուհերի ռազմավարական կառավարման հիմնախնդիրները ռազմավարական կառավարման արդյունավետության և կրթության մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից,
- ուսումնասիրել բուհերի ռազմավարական պլանավորման հիմնախնդիրները, ռազմավարական պլանավորման ժամանակակից գործիքներն ու միջոցները,
- վերլուծության ենթարկել կազմակերպությունների ռազմավարական կառավարման բաղադրիչները, մշակված ռազմավարություններն ու ռազմավարական պլանավորման փաստաթղթերը:

Դասընթացի անվանում	Նախագծերի կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրոս
Ուսուցման ձև	Առկա
Տակնուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	35	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	30	Ռեֆերատ

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Նախագծերի կառավարում առարկան նախատեսված է տարբեր մասնագիտություններով և որակավորումներով ուսանողների համար: Առարկայի արդյունավետ յուրացման համար նախնական նախագծերի կառավարման փորձը պարտադիր չէ:

Այնուամենայնիվ, առարկայի արդյունավետ յուրացման համար ցանկալի է, որպեսզի ուսանողները՝

1. տիրապետում հանրակրթական մակարդակի մաթեմատիկա առարկային,
2. տիրապետում միջինից բարձր մակարդակի անգլերենի,
3. ուսանելու և ինքնագարգացման ցանկություն,
4. տեսական գիտելիքի կիրառման ընդունակություն և որոշումների կայացում,
5. հաղորդակցման ունակություններ,
6. անհրաժեշտ տվյալների հավաքագրման և կիրառման հմտություններ՝ հստակ սահմանված և վերացական խնդիրներին արձագանքելու համար,
7. սեփական կարծիքը գրավոր և/կամ բանավոր շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու ունակություն,
8. նոր գիտելիքների ձեռքբերման ընդունակություն,
9. ինքնուրույն հետազոտական գործունեություն իրականացնելու ընդհանուր և տարրական հմտություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախագծերի կառավարման այս դասընթացի ընթացքում ուսանողները կսովորեն նախագծերի պլանավորման հիմնական սկզբունքները, որը կներառի շահակիցների քարտեզագրումը, կատարվելիք աշխատանքի սահմանումը և նկարագրումը, ինչպես նաև նախագծի աշխատանքների կառուցվածքի սահմանումը:

Հաջող նախագծերը պահանջում են նախնական մանրակրկիտ պլանավորում: Այս դասընթացի ընթացքում ուսանողները կսովորեն նախագծերի կառավարչի և նախագծի թիմի հիմնական դերերի և պարտականությունների մասին: Ուսանողները նաև կսովորեն նախապես

պատասխանել մի շարք կարևոր հարցերի, որոնք կօգնեն հասնել նախագծի նպատակներին՝

- Որո՞նք են լինելու տվյալ նախագծի ձեռքբերումները:
- Ինչու՞ է այս նախագիծը կարևոր:
- Ովքե՞ր են օգտվելու այս նախագծի արդյունքներից:
- Ինչպե՞ս ենք պլանավորելու հաջող արդյունքների ձեռքբերումը:

Այս դասընթացի ընթացքում ուսանողները կսովորեն ստեղծել նախագծի բյուջե և ժամանակացույց, որոնք կապահովեն անհրաժեշտ արդյունքների ձեռքբերումը սահմանված ծախսերի և սահմանափակումների պայմաններում: Նախագծի լավ կազմված ժամանակացույցը օգնում է նախագծի բոլոր թիմի անդամներին աշխատել միասին նախագծի նպատակներին հասնելու համար: Իրատեսական ծախսային սահմանափակումներով նախագծի բյուջեն հանդիսանում է ցանկացած նախագծի կարևորագույն տարրերից մեկը: Այս դասընթացի ընթացքում ուսանողները կսովորեք հետևել ժամանակային և ծախսային սահմանափակումներին՝ իրենց նախագծերի հաջողությունը ապահովելու համար:

Նախագծերի կառավարման այս դասընթացը կսովորեցնի կառավարել նախագծի ռիսկերը՝ նախագծի աշխատանքների նկարագրի և նպատակների անխուսափելի փոփոխությունները հատկորոշելու, վերլուծելու և հաղորդակցելու միջոցով: Ցանկացած նախագծի դեպքում կարող են տեղի ունենալ անսպասելի իրադարձությունները: Ուսանողները կծանոթանան նախագծի աշխատանքների նկարագրի, ժամանակացույցի և ծախսերի կատարողականի չափման և հաղորդակցման տարրերին: Ուսանողները կսովորեն փոփոխությունների կառավարման այնպիսի գործիքների մասին, որոնք նվազագույնի են հասցնում թիմի և այլ շահակիցների աշխատանքի խաթարումը:

Դասընթացը հնարավորություն է տալիս ծանոթանալու նախագծերի կառավարման գաղափարին, օգտագործել նախագծերի մշակման և իրականացման սկզբունքները: Դասընթացը ներառում է հետևյալ հիմնական բաժինները՝ նախագծի կառավարման հիմունքներ, նախագծերի կառավարման փուլեր, նախագծի կառուցվածք, նախագծի ղեկավար, գործողությունների (միջոցառումների) բյուջետավորում, նախագծի մոնիթորինգ և գնահատում, արդյունքային ցուցանիշների վերլուծության սկզբունքներ: Յուրաքանչյուր բաժին կազմված է առանձին թեմաներից, որոնք ընդգրկում են նաև ՀՀ կրթության ոլորտում իրականացվող կամ մշակվող ծրագրերի օրինակներ, գործնական և անհատական աշխատանքներ:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Նախագծերի կառավարման ժամանակակից փորձը ենթադրում է մասնագիտական մեթոդների կիրառություն, որի հիմքում ընկած են տարրական և հիմնական դրույթներ: Դասընթացը կոչված է տալու այն գիտելիքները և հմտությունները, որոնք անհրաժեշտ են նախագծի ղեկավար աշխատելու և կրթության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր մշակելու ու իրականացնելու համար: Դասընթացն ընդգրկելու է նաև ոլորտային նախագծերի կառավարման ուսումնասիրում:

Դասընթացի անվանում	Ֆինանսական կառավարում և հանրային ֆինանսներ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցանկույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	45	Միջանկյալ գնահատում
	Բ3	45	Ամփոփիչ գնահատում

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ.** Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝ Հաշվապահության և մենեջմենթի հիմունքների մասին բազային գիտելիքներ:
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**
«Ֆինանսական կառավարում և հանրային ֆինանսներ» առարկան ընդգրկում է կազմակերպության ֆինանսական դրության գնահատումը, ֆինանսական դրության վրա ազդող գործոնների բացահայտումը, ֆինանսական վիճակի կանխատեսումը, ֆինանսավորման աղբյուրների ընտրությունը, կազմակերպության իրացվելիության և վճարունակության գնահատումը և այլն:
- 3. Դասընթացի նպատակն ու խնդիրները**
Դասընթացի նպատակն է օգնել ուսանողներին ձեռք բերել գիտելիքներ, որակներ և հմտություններ, որոնք նրանց հնարավորություն կտան օգտվելու պրակտիկ աշխատանքում ֆինանսական մենեջմենթի դրույթներից : Դասընթացը մանրամասնորեն ուսումնասիրած ուսանողները կբացահայտեն տվյալ առարկայի կիրառական բնույթը թե՛ ապագայում ձեռնարկատիրությամբ զբաղվելու թե՛ որպես վարձու աշխատող հանդես գալու պարագայում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Կառավարչական վերլուծությունների գործիքակազմ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրոս
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	20	Ներկայություն և մասնակցություն
	F2	40	Միջանկյալ քննություն
	F3	40	Ամփոփիչ քննություն

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Կառավարչական վերլուծությունների գործիքակազմ առարկան նախատեսված է տարբեր մասնագիտություններով և որակավորումներով ուսանողների համար: Առարկայի արդյունավետ յուրացման համար նախնական կառավարչական փորձը պարտադիր չէ:

Այնուամենայնիվ, առարկայի արդյունավետ յուրացման համար ցանկալի է, որպեսզի ուսանողները՝

- Տիրապետեն հանրակրթական մակարդակի մաթեմատիկայի,
- Տիրապետեն միջին և բարձր մակարդակի անգլերենի,
- Ունենան ուսանելու և ինքնազարգացման ցանկություն:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ինքնուրույն աշխատանքի թեմաներ՝

1. Քաղաքականության վերլուծություն մեթոդները
2. Որոշումների կայացման համար անհրաժեշտ վերլուծությունների անցկացման համակարգերի, մոդելների և մեթոդների ընդհանուր նկարագիրը,
3. Որոշումների կայացման համակարգի հիմնական բաղադրիչների նկարագրություն՝
 - ✓ Միջավայրի կամ շրջանակի բացահայտում/ սահմանում
 - ✓ Հնարավոր այլընտրանքների նկարագրում
 - ✓ Հետևանքների կանխատեսում
 - ✓ Հնարավոր արդյունքների չափում
 - ✓ Որոշման կայացում
4. Ծախս-Արդյունք վերլուծության մոդելի նկարագրություն
5. Դինամիկ մոդելների նկարագրեր (սխեմատիկ արտապատկերում, գծապատկերների, գրաֆիկական վերլուծական գործիքներ)

6. Որոշումների ծառի նկարագրում, առաձևահատկությունները, և կիրառման տիրույթները
7. Որոշումների ծառի կիրառման առաձևահատկությունները՝ անորոշությունների ի հայտ գալու դեպքում
8. Անորոշությունների առկայության պարագայում որոշումների կայացման հնարավորությունները
9. Որոշումների կայացման շղթայական համակարգի նկարագրությունը
10. Որոշումների կայացման գործընթացում հավանականության տեսության գործիքակազմի կիրառությունը՝ հետևանքների կանխատեսման համատեքստում
11. Անորոշությունների գնահատման առաձևահատկությունները հավանականության տեսության գործիքակազմի կիրառման համատեքստում
12. Որոշումների ծառի ընդհանրացված մոդելի ներկայացում՝ կիրառելով համակցված անորոշություններով արդյունքների չափման հավանականային մեթոդը,
13. Հավանականության այլ մոդելների ներկայացում
14. Ռիսկերի գնահատման իրականացում՝ որոշումների կայացման գործընթացում
15. Օգտակարության տեսության նկարագրությունը (Utility theory)
16. Հանրային որոշումների կայացման առաձևահատկությունները, առաջնահերթությունների սահմանման մանրամասներ
17. Առաջնահերթությունների սահմանման (Defining preferences) առաձևահատկությունները,
18. Հանրային որոշումների կայացման առաձևահատկությունները՝ հաշվի առնելով առաջնահերթությունները
19. «Բազմատարր և տարրարդյունք հետևանքներ ունեցող որոշումների կայացման» խնդրի լուծման մոդելներ, կիրառության մանրամասներ
20. Ծախս-արդյունք մոդելի կիրառման հնարավորությունները
21. Ծախս-արդյունք մոդելի կիրառությունը նախագծերի գնահատման փուլում
22. Պրակտիկ Օրինակների ներկայացում՝ մոդելի կիրառությունը պատկերավոր դարձնելու նպատակադրմամբ
23. Ապագայում ստացվող արդյունքի/ կամ հնարավոր ծախսի բերված արժեքի ներկայացման մանրամասները
24. Նախագծի հետզնեկության կարևորությունը նախագծերի իրականացման գործընթացում
25. Ներքին եկամտաբերության գործակցի որոշում
26. Հանրային որոշումներ համեմատած մասնավոր կամ բիզնես որոշումների հետ, մոդելների ընտրության մանրամասները
27. Հետևանքների կանխատեսումներ
28. Այլընտրանքային տարբերակների քննարկման մանրամասներ

Դասընթացի անվանում	Հանրային քաղաքականության վերլուծություն և պլանավորում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Դասընթացի առաջին փուլի գնահատում (Գործնական առաջադրանքի կատարում և բանավոր ներկայացում)
	Բ3	20	Ընթացիկ դործնական աշխատանքների գնահատում
	Բ4	45	Դասընթացի վերջնական ստուգում և գնահատում (ծրագրի կազմում և բանավոր ներկայացում) (խմբային աշխատանք)

<p>1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)</p> <p>Դասընթացն լավագույնս յուրացնելու համար այս մասնագիտության կրթական ծրագիրն ընտրած ուսանողը պետք է՝</p> <ul style="list-style-type: none"> • ունենա բակալավրի որակավորում, • ունենա ընդհանուր գիտելիքներ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) պետական կառուցվածքի, պետական կառավարման համակարգի և մարմինների, մասնավորապես՝ կրթության ոլորտի պետական կառավարման համակարգի մասին, • ծանոթ լինի ՀՀ օրենսդրական դաշտին, այդ թվում՝ կրթության ոլորտի հիմնական օրենքներին և իրավական ակտերին, • ընդհանուր պատկերացում ունենա պետական մարմինների, բիզնես ոլորտի, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների փոխազդեցության մասին, • ունենա տեղեկատվություն՝ այդ թվում վիճակագրական տվյալներ, փնտրելու, հավաքագրելու և վերլուծելու հմտություններ, ինչպես նաև տվյալները աղյուսակների, գրաֆիկների ու դիագրամների միջոցով ներկայացնելու հմտություններ, • ունենա ընդհանուր մաթեմատիկական գիտելիքներ, մասնավորապես՝ (ա) հասկանա ուղիղ և հակադարձ համեմատական կապը, կարողանա հաշվարկել թվի տոկոսը կամ մասը, (բ) գաղափար ունենա հանրահաշվական արտահայտությունների, հաստատունի ու փոփոխականի մասին, (բ) գաղափար ունենա ֆունկցիայի մասին և հասկանա ֆունկցիայի դերը կիրառական իրադրությունները նկարագրելիս, • ունենա հայերեն բանավոր և գրավոր խոսքի գերազանց իմացություն, • բավարար տիրապետի անգլերեն լեզվին, քանի որ հիմնական ու լրացուցիչ մասնագիտական գրականության գերակշիռ մասն անգլերեն լեզվով է,

- Ունենա համակարգչային հմտություններ, մասնավորապես կարողանա վարժ աշխատել Microsoft Word, PowerPoint, Excel ծրագրերով,
- ունենա ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը ուսումնասիրում է ոլորտային քաղաքականության վերլուծության և պլանավորման գործընթացները, մոդելները և մեխանիզմները: Մասնավորապես, դասընթացը.

- ներկայացնում է ոլորտային քաղաքականության վերլուծության և մշակման հիմնական փուլերն՝ անդրադարձ կատարելով քաղաքականության մշակման գործընթացում հիմնական մասնակիցների և շահակիցների (պետական կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, գործարար ոլորտի, միջազգային կազմակերպությունների և այլն) դերին, նրանց ներգրավվածության աստիճանին և ազդեցությանը,
- մասնավորեցնում է քաղաքականության վերլուծության և պլանավորման գործընթացների և շրջափուլերի ուսումնասիրումը կրթության ոլորտի համար՝ ելնելով երկրի սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստից,
- ներկայացնում է չափանիշ և ցուցանիշ հասկացություններն ու կրթության ոլորտի հիմնական ցուցանիշները, պարզաբանում է դրանց բնորոշման, հաշվարկման և կիրառման մեթոդները կրթության ոլորտի քաղաքականության վերլուծության մեջ՝ հիմնվելով փաստացի տվյալների վրա,
- քննարկում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի նպատակներն ու գործառույթները և դրա կիրառությունը քաղաքականության մշակման գործընթացում՝ տեղեկացված որոշումների կայացնելու նպատակով,
- ներկայացնում է նեղ ուղղորդված, լայնամասշտաբ և ռազմավարական ծրագրերի կազմման մեթոդաբանությունը՝ որպես քաղաքականության մշակման գործիք,
- անդրադառնում է կրթության պլանավորման սիմուլյացիոն մոդելների օգտագործմանը:

ՀՀ կրթության համակարգի համեմատական վերլուծությունը, համակարգի հետագա զարգացմանն ուղղված քաղականության մշակումը հաղիսանում են դասընթացի բաղկացուցիչ մաս:

Դասընթացն իրականացվում է դասախոսությունների և ուսուցման խտերակտիվ մեթոդների համակցմամբ՝ ներառելով անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարում ու ծրագրերի կազմում:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ոլորտային քաղաքականության վերլուծության ու մշակման գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ուսուցանել մշակված քաղաքականությունն իրականացնելու և դրա ազդեցությունը գնահատելու մեթոդներն ու գործիքակազմը:

Դասընթացի խնդիրներն են.

- ուսուցանել ոլորտային քաղաքականության մշակման շրջափուլերը և սովորեցնել ինքնուրույն կատարել քաղաքականության վերլուծություն և դրա հիման վրա քաղաքականության նոր ուղղությունների մշակում,
- վերլուծել ՀՀ կրթության համակարգի առկա վիճակը և զարգացման ռազմավարությունը, տրամադրել կրթական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի ընթացքն, արդյունավետությունը ու արդյունքները վերլուծելու գիտելիքներ և հմտություններ,
- զարգացնել տվյալների (մասնավորապես կրթության ոլորտի տվյալների) հավաքագրման, վերլուծման ու համադրման կարողությունները, գործնականում կիրառել կառավարման տեղեկատվական համակարգերը,
- ուսուցանել չափանիշ և ցուցանիշ հասկացություններն, դրանց բնորոշման, կազմման, հաշվարկման և կիրառման մեթոդները և զարգացնել դրանք ոլորտի քաղականության մշակման

մեջ կիրառելու կարողությունները,

- ծանոթացնել միջազգայնորեն կիրառվող կրթության ոլորտի հիմնական ցուցանիշներին, զարգացնել համեմատական վերլուծությունների և կրթության համակարգերի գնահատման մեջ դրանք կիրառելու հմտությունները,
- ուսուցանել ծրագրերի կառավարման ցիկլը և մեթոդաբանությունը, ինչպես նաև սովորեցնել նեղ ուղղորդված, լայնամասշտաբ ու ռազմավարական զարգացման ծրագրերի կազմման ու ֆինանսական պլանավորման մեխանիզմները՝ կիրառելով տրամաբանական շրջանակի մոտեցումը,
- վերլուծել կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարման համակարգերը, կառավարման ապակենտրոնացման քաղաքականության նպատակներն ու խնդիրները, առավելություններն ու թերությունները, ինչպես նաև կառավարման տարբեր մակարդակներում պետական կառավարման մարմինների միջև իրավասությունների և լիազորությունների վերաբաշխումը ապակենտրոնցման գործընթացում,
- սովորեցնել պլանավորման գործընթացում համակարգչային սիմուլիացիոն մոդելների կիրառումը,
- զարգացնել ուսանողների անհատական և թիմային աշխատանքի հմտությունները,
- բարելավել տեղեկատվության հայթայթման և վերլուծման հմտությունները,
- զարգացնել քննական մտածողության և ստեղծագործական հմտությունները,
- զարգացնել հետազոտական աշխատանքներ կատարելու և ակադեմիական շարադրանքի կարողությունները,
- բարելավել անհատական աշխատանքի արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և մեկնաբանելու կարողությունները,

Դասընթացի անվանում	Հանրային իրավունք
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն
	Բ2	35	Մոդուլ
	Բ3	20	Ինքնուրույն աշխատանք
	Բ4	35	Ամփոփիչ քննություն

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ նախապայման է ուսանողի ընդհանուր հասարակական գիտակցության բարձր մակարդակը, հասարակական զարգացումների և իրավական գործընթացների վերաբերյալ պատշաճ իրազեկվածությունն ու դրանց նկատմամբ հետաքրքրությունը: Դասընթացի ընթացքում ուսանողը պարտավոր է մեծ ուշադրություն դարձնել ինքնապատրաստությանը, ինչը հնարավորություն կտա ուսումնական գործընթացին զուգընթաց լրացնել իրավական ոլորտում հենքային գիտելիքների պակասը: Ուսանողի ռուսերենով և անգլերենով աշխատելու կարողությունը ցանկալի է, լրացուցիչ գրականությունից օգտվելու համար և տիրապետի համակարգչից օգտվելու գիտելիքներին, մասնավորապես MS Word, Power point ծրագրերին: Ուսանողը պարտավոր է նախաձեռնողականություն ցուցաբերել թեմաների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու կամ դրանք առավել խորությամբ ընկալելու նպատակով դասախոսի հետ պարբերական քննարկումներ կազմակերպելու հարցում: Անհրաժեշտ է որպեսզի ուսանողը հնարավորություն ունենա կատարել ինքնուրույն, ինչպես նաև թիմային աշխատանքներ, ունենա տրամաբանելու ունակություն, պատրաստակամության և պատասխանատվության զգացում:

7. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Հանրային իրավունք» դասընթացի նպատակն է ապագա հանրային կառավարիչներին ծանոթացնել կառավարման իրավական հիմքերին, պետության իրավական համակարգի առանձնահատկություններին, իրավունքի ձևավորման աղբյուրներին, իրավական նորմի հասկացությանը, իրավական ակտերի մշակման, ընդունման գործընթացներին, իրավունքի ճյուղերին, քաղաքացիական հասարակության հիմնադրույթներին, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման չափորոշիչներին՝ հիմնված ժողովրդավական արժեհամակարգի սկզբունքների և նորմերի վրա: Իրավունքի հիմունքների և մարդու իրավունքների վերաբերյալ ընդհանուր պատկերացում կձևավորվի պետության և իրավունքի տեսության ու իրավունքի տարբեր ճյուղերի հատման տիրույթում գտնվող նորմերի ու սկզբունքների համալիր ու համեմատական վերլուծության միջոցով:

Աշխատանքային գործունեության ընթացքում հանրային կառավարման մասնագետը մտնում է քաղաքացիաիրավական տարբեր տեսակի հարաբերությունների մեջ, որի համար անհրաժեշտ է ունենալ գիտելիք նշված իրավահարաբերությունների կառուցման սկզբունքների, մեթոդների, տվյալ բնագավառում ծագող իրավունքների և պարտականությունների մասին, ինչը կարող է ապահովել հանրային իրավունքի գիտության հետ ծանոթությունը:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակներն են՝

- ✓ ծանոթացնել իրավունքի տերմինոլոգիական հենքին, հասկացության ապարատին, պետության և իրավունքի համակարգին, իրավունքի հիմնական սկզբունքներին ու նորմերին, իրավական դասակարգմանը, դրանց մշակման, ընդունման, գործընթացին,
- ✓ ծանոթացնել մարդու իրավունքների տեսակներին, դրանց պաշտպանության առանձնահատկություններին,
- ✓ զարգացնել իրավական խնդիրների ընկալման և դրանց լուծման ուղղված միջոցների հայտնաբերման կարողությունները,
- ✓ կատարելագործել կառավարմանը վերաբերող իրավական հարցերի ուղղորդման հմտությունները:

Դասընթացի անվանում	Որակի կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	30	Ամփոփիչ բանավոր գնահատում
	Բ4	30	Անհատական աշխատանք (պաշտպանությամբ)

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝
Դասընթացն առավելագույնս արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողներն ունենան կառավարման և կրթության կառավարման հիմունքների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, ինչպես նաև տիրապետեն անգլերենին և ռուսերենին, քանի որ անհրաժեշտ հիմնական ու լրացուցիչ մասնագիտական գրականությունը նաև այդ լեզուներով է: Ուսանողները պետք է ունենան նաև ինքնուրույն աշխատանքի կարողություններ ու տիրապետեն անհատական վերլուծական հմտություններին:

2. ԴԱՍՐՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը ներառում է որակի և կրթության որակի ապահովման ժամանակակից համակարգի հիմնահարցերը: Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում որակի հիմնական հասկացություններին, որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներին, որակի կառավարման արդի մոտեցումներին ու մոդելներին: Հատուկ ուշադրություն է հատկացվում որակի մշակույթի՝ որպես հաստատության կազմակերպական մշակույթի կարևոր բաղադրիչի խնդիրներին: Մանրամասն քննարկվում են որակի ապահովման և Բոլոնիայի մյուս ուղղությունների համակարգային կապը, ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, ընթացակարգերը, որակի ապահովման գործընթացների հիմնական պատասխանատուների և շահակիցների դերակատարումները, փորձագետների և մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության շրջանակը: Դասընթացի շրջանակներում ներկայացվում են նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) գործունեությունը, ռազմավարական խնդիրները, առաքելությունը, որակի ապահովման ՈԱԱԿ-ի սկզբունքներն ու շահակիցների հետ համագործակցությունը:

3. Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝

- ✓ ծանոթացնել ուսանողներին որակի և կրթության որակի կառավարման ու գնահատման հիմնական հասկացություններին, կառուցակարգերին և գործիքակազմին,
- ✓ ներկայացնել որակի և կրթության որակի ապահովման գործընթացի վերաբերյալ առկա մոտեցումները,
- ✓ աջակցել ուսանողներին՝ տիրապետելու որակի գնահատման մեթոդներին և տեխնիկական գործիքակազմին,
- ✓ զարգացնել կրթության որակի խնդիրների ընկալման և դրանց լուծմանն ուղղված միջոցների հայտնաբերման կարողություններ,
- ✓ ընդլայնել հետագա ուսումնասիրությունների հայեցակարգային շրջանակը:

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Կառավարչի հաղորդակցման հմտություններն անգլերենով
Դասընթացի տեսակ	Կամրնտրական
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին և 2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	2		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	20	Ներկայություն և մասնակցություն
	F2	25	Միջանկյալ գնահատում
	F3	25	Ամփոփիչ գնահատում
	F4	30	Ինքնուրույն աշխատանք

<p>1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)</p> <p>Սույն դասընթացը սկսելու համար ուսանողը պետք է տիրապետի լեզվական գիտելիքների առնվազն B2` ըստ Լեզուների համաեվրոպական համակարգի չափանիշերի, այսինքն`</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողը կարող է հասկանալ իր մասնագիտությանը, ինչպես նաև սոցիալական, գիտական և այլ ոլորտներին առնչվող ընդարձակ տեքստեր, • քննադատորեն վերլուծել տեքստի տարբեր մասեր, • ամփոփ շարադրել տեքստերը, • արտահայտել կարծիքը մասնագիտությանն ու այլ ոլորտներին առնչվող տարբեր թեմաների շուրջ` ցուցաբերելով բառապաշարի ու քերականական կառույցների իմացություն, • զեկույցներ պատրաստել և մասնակցել քննարկումներին և բանավեճերին • բացատրել մասնագիտական թեմային առնչվող խնդրի մասին իր տեսակետը` ցույց տալով տարբեր կարծիքների առավելություններն ու թերությունները, • դասընթացին առնչվող ամենատարբեր թեմաների մասին հստակ, մանրամասն տեքստ գրել, զեկուցում կամ էսսե գրել` տեղեկություն հաղորդելով կամ որոշակի տեսակետ հիմնավորող կամ հերքող դատողություններ անելով, • կարող է լսելով ընկալել անգլերեն բանավոր խոսքը` կենդանի և ձայնագրված (հեռուստատեսություն, ռադիո, լուրեր, քննարկումներ և այլն) այնպես, որ կարողանա բանավոր և գրավոր ներկայացնել դրանց համառոտ բովանդակությունը` օգտագործելով տվյալ ոլորտին հատուկ բառապաշար, • ունենա ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ: <p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ</p> <p>Տվյալ դասընթացը նախատեսված է մագիստրատուրայի «Կառավարում» բաժնի 1-ին կուրսի ուսանողների համար: Դասընթացի հիմքում ընկած են Content and Language Integrated Learning (henceforth CLIL) (բովանդակության վրա հիմնված ուսուցում) մեթոդաբանության սկզբունքները,</p>

որոնք հնարավորություն են տալիս զարգացնել ուսանողների լեզվական, մասնագիտական գիտելիքները, հաղորդակցման հմտությունները մասնագիտական ոլորտին առնչվող տեքստերի ու դրանց բառապաշարի ուսումնասիրման, քննարկման ու վերլուծության միջոցով: Դասընթացի շրջանակներում շեշտադրվելու է կառավարման ոլորտին առնչվող տեքստերի վերլուծական ընթերցանությունը, բառապաշարի ճիշտ օգտագործման ուսուցումը, մասնագիտական ոլորտին առնչվող թեմաների քննարկումն ու ուսանողների կողմից ինքնուրույն և խմբային աշխատանքների իրականացումը: Ուսանողները ընթերցելու և վերլուծելու են մասնագիտական ոլորտին առնչվող անգլալեզու տեքստեր, հոդվածներ, ունկնդրելու են համապատասխան ուղղվածության անգլալեզու ծրագրեր, TED Talk-եր, ինչպես նաև օգտագործելով հիմնական թեմատիկ բառապաշարը՝ պատրաստելու են թեմատիկ պաստառներ և ներկայացումներ (PPT):

Մասնավորապես, դասընթացը

- զարգացնում է մասնագիտական գիտելիքները և բառապաշարը
- ծանոթացնում է կառավարման տարբեր տեսակների հետ
- ուսումնասիրում է արդյունավետ կառավարման առանձնահատկությունները
- ծանոթացնում է կառավարիչների գործառույթների հետ
- ուսումնասիրում է մարդկային ռեսուրսների և հանրային կառավարման առանձնահատկությունները

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Սույն դասընթացի նպատակն է՝

- կատարելագործել ուսանողների՝ անգլերեն լեզվով հաղորդակցման հմտությունները ինչպես մասնագիտական, այնպես էլ հաղորդակցման ոլորտներում,
- նպաստել ուսանողների մոտ կառավարման ոլորտին առնչվող մասնագիտական գիտելիքների և բառապաշարի ընդլայնմանն ու յուրացմանը,
- զարգացնել ուսանողների՝ տեքստերի իմաստային մեկնաբանման, քննադատական մտածողության, բառերի համատեքստային իմաստների զանազանման հմտությունները,
- լսարանային աշխատանքների ընթացքում կատարել մասնագիտական ուղղվածություն ունեցող տեքստերի վերլուծություն, քննարկում և բառապաշարի հարստացում:

Դասընթացի անվանում	Պետական անվտանգություն և կայունություն
Դասընթացի տեսակ	Կամրնտրական
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	30	Ամփոփիչ բանավոր գնահատում
	Բ4	30	Անհատական աշխատանք (պաշտպանությամբ)

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝
 իրազեկվածությունը, ինչպես նաև պետական (ազգային) անվտանգության ապահովման հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունը: Դասընթացն առավելագույնս արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողները տիրապետեն անգլերենին և ռուսերենին, քանի որ հիմնական ու լրացուցիչ մասնագիտական գրականությունը հիմնականում առկա է այդ լեզուներով: Ուսանողները պետք է ունենան նաև ինքնուրույն աշխատանքի կարողություններ ու տիրապետեն անհատական վերլուծական հմտություններին:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Պետական անվտանգություն և կայունություն» դասընթացի հիմնական նպատակն է ապագա հանրային կառավարիչներին ծանոթացնել պետական անվտանգության ապահովման հիմնահարցերին՝ հաշվի առնելով ազգային և համաշխարհային տնտեսության գլոբալացման համատեքստերը: Ժամանակակից հարավփոփոխ աշխարհում ձևավորվում են նոր մարտահրավերներ և սպառնալիքներ, որոնք պահանջում են վերջիններիս կանխատեսում և կանխարգելում՝ այդ կերպ ապահովելով անհատի, հասարակության, պետության պաշտպանվածությունն ու անվտանգությունը: Ուստի խիստ կարևորվում է պետական անվտանգության և դրա տեսակների ապահովման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների տիրապետումն ու իրազեկվածությունը: Սույն դասընթացը ներառում է պետական անվտանգության և դրա առանձին տեսակների ապահովման տեսական և մեթոդաբանական հիմնական դրույթները: Այն ընդգրկում է պետական անվտանգության հասկացության հասարակ, կառուցվածքն ու գործառույթները, պետական անվտանգության հիմնական տեսակներն ու վերջիններիս սպառնացող ներքին և արտաքին վտանգները, ազգային անվտանգության պետական մարմինները, ՀՀ ազգային անվտանգության ապահովմանն առնչվող հիմնարար փաստաթղթերը:

Սույն դասընթացը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- ազգային անվտանգություն,
- իրավական անվտանգություն,
- տեղեկատվական անվտանգություն,
- ռազմական անվտանգություն,
- տնտեսական անվտանգություն,
- կրթական անվտանգություն,
- գիտատեխնիկական անվտանգություն,
- կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանություն:

«Պետական անվտանգություն և կայունություն» դասընթացի հիմնական նպատակադրումներից են ուսանողներին նոր գիտելիքներ փոխանցելը, պետական անվտանգության և դրա առանձին տեսակների ապահովմանն առնչվող նոր խնդիրների առաջադրումն ու լուծման ուղիների ներկայացումը: Այս դասընթացը ներառում է մասնագիտական գիտելիքների փոխանցումը և գործնական հմտությունների ու կարողությունների զարգացումը:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

«Պետական անվտանգություն և կայունություն» դասընթացի նպատակներն են՝

1. ներկայացնել պետական անվտանգության և դրա առանձին տեսակների ապահովման վերաբերյալ առկա տեսություններն ու մոտեցումները,
2. ուսանողների մոտ ձևավորել պատկերացում պետական անվտանգության ապահովման ամբողջական գործընթացի և գործառույթների, ինչպես նաև դրա առանձին տեսակներին սպառնացող ներքին և արտաքին վտանգների վերաբերյալ,
3. զարգացնել պետական անվտանգության խնդիրների ընկալման և դրանց լուծմանն ուղղված միջոցների հայտնաբերման կարողություններ,
4. ընդլայնել հետագա ուսումնասիրությունների հայեցակարգային շրջանակը:

«Պետական անվտանգություն և կայունություն» դասընթացի խնդիրներն են՝

1. ծանոթացնել պետական անվտանգության տերմինոլոգիական հենքին և հասկացության ապարատին,
2. ներկայացնել պետական անվտանգության ապահովման գործընթացի էությունը, մեթոդները, բաղադրիչներն ու տեսակները,
3. ծանոթացնել ազգային անվտանգության ապահովման արդյունավետության գնահատման

մեթոդաբանական հիմքերին,

4. ներկայացնել պետական անվտանգության և դրա տեսակների ապահովմանը սպառնացող ներքին և արտաքին վտանգները, ինչպես նաև առկա հիմնախնդիրներն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում,
5. ներկայացնել ՀՀ ազգային անվտանգության ապահովման ռազմավարական նպատակները,
6. ծանոթացնել ՀՀ ազգային անվտանգության ապահովման նպատակադրումներին և խնդիրներին՝ միտված գլոբալացման պայմաններում հաղթահարմանը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Հետազոտության մեթոդները սոցիալական գիտություններում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	2												
	<table border="1"> <tr> <th>Բաղադրիչ</th> <th>%</th> <th>Բաղադրիչի անվանումը</th> </tr> <tr> <td>Բ1</td> <td>20</td> <td>Ներկայություն և մասնակցություն</td> </tr> <tr> <td>Բ2</td> <td>40</td> <td>Մոդուլ</td> </tr> <tr> <td>Բ3</td> <td>40</td> <td>Ինքնուրույն աշխատանք</td> </tr> </table>	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը	Բ1	20	Ներկայություն և մասնակցություն	Բ2	40	Մոդուլ	Բ3	40	Ինքնուրույն աշխատանք
Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը											
Բ1	20	Ներկայություն և մասնակցություն											
Բ2	40	Մոդուլ											
Բ3	40	Ինքնուրույն աշխատանք											

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝**
 Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է, որպեսզի ուսանողները ունենան բակալավրիատի մակարդակին համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև տրամաբանելու կարողություն»:
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**
 Դասընթացը նախատեսված ուսանողների այն շրջանակի համար, ովքեր ցանկանում են սովորել, կազմել հետազոտության կառուցվածքը կամ գիտական առաջարկներ պատրաստել, գիտական ամսագրերում հրատարակվել, էսսեներ կամ թեզեր գրել:
 Դասընթացը թույլ կտա լավագույնս օգտվել հետազոտությունների ընձեռած արդյունքներից: Դասընթացի ընթացքում ուսանողները կձանդանան որակական և քանակական հետազոտությունների հիմնական բաղադրիչներին, կուսումնասիրեն հետազոտությունների առաջադեմ ռազմավարությունները, հետազոտության նախագծման գործընթացում ներառական օգնության առանձնահատկություններին: Այս դասընթացը նախատեսված է սոցիալական գիտություններով հետաքրքրված ուսանողների լայն լսարանի համար:
 Այս դասախոսությունների համառոտ ամփոփումը մշակվել է ուսումնասիրվող առարկայի հետ առնչվող՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքների, հայրենական և օտարերկրյա հեղինակների գիտական բնույթի գրականության, պարբերաբար լույս տեսնող տեղեկատվական ամսագրերի, գործնականում ձեռք բերված հայրենական և արտասահմանյան մասնագետների փորձը ամփոփող տպագրված նյութերի հիման վրա: Դասընթացը արտացոլում է ուսումնասիրվող առարկայի բուն էությունը, խնդրահարույց հարցերը, ինչպես նաև հետազոտության մեթոդներին առնչվող ոլորտների զարգացումը ապահովող առաջատար առաջարկներ:
- 3. Դասընթացի նպատակն ու խնդիրները**
 Դասընթացի նպատակն է ուսանողի կողմից հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների յուրացումը: Դասընթացը հնարավորություն կտա նորովի ընկալել հետազոտություն իրականացնելու հմտությունը:

Որպես եզրահանգում դասընթացի հիմնական խնդիրն է հետազոտություն իրականացնելու և վերլուծելու ունակությունների և գիտելիքների ձեռքբերումը: Առարկան պատասխանում է մի շարք հարցերը մասնավորապես.

- *Ինչպես իրականացնել հետազոտության նախագծումը:*
- *Ինչպես ծանոթանալ ժամանակակից հետազոտական խնդիրներին:*
- *Ինչպիսին պետք է լինի հետազոտության կառուցվածքը և ներկայացուցչականությունը:*

Դասընթացի անվանում	Գիտական շարադրանքի մեթոդներ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կառավարում
Մասնագիտացում	Հանրային կառավարում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	2		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն
	Բ2	25	Միջանկյալ գնահատում
	Բ3	40	Գործնական առաջադրանքների գնահատում
	Բ4	25	Անփոփիչ գնահատում

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ (դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)

Այս դասընթացին մասնակցելու համար սովորողը պետք է ունենա՝

- գաղափար տեքստի կառուցվածքի, իմաստային և կառուցվածքային նվազագույն միավորների, դրանց կապակցման լեզվական միջոցների մասին,
- գաղափար գիտական ոճի առանձնահատկությունների մասին,
- գիտական խոսքի պարզագույն նմուշներ (ռեֆերատ, կուրսային աշխատանք և այլն) գրելու փորձ,
- անգլերեն և ռուսերեն մասնագիտական գրականություն կարդալու և հասկանալու կարողություն
- ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը նպատակ ունի տեսության և առավելապես գործնական աշխատանքի համատեղման միջոցով ուսանողին ծանոթացնելու գիտական խոսքի ժանրային տարբեր դրսևորումներին, գիտական շարադրանքի մեթոդներին ու գիտականությունն ապահովող հիմնական սկզբունքներին, գիտական տեքստի կառուցվածքային և լեզվական առանձնահատկություններին, զարգացնելու սովորողների՝ գիտական խոսք կառուցելու հմտությունները: Դասընթացը շեշտն առավելաբար դնում է անհատական և խմբային գործնական աշխատանքների վրա, որոնք թույլ են տալիս ուսանողին նյութն ընկալել գիտելիքը գործնականում կիրառելու միջոցով: Ուսանողները գիտական շարադրանքի իրենց հմտությունները կզարգացնեն ինչպես տարբեր նմուշների վերլուծության, այնպես էլ ինքնուրույն շարադրանքի միջոցով:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է տեսական գիտելիքի և գործնական հմտությունների ձևավորման միջոցով ուսանողներին օգնել հետազոտական աշխատանքի արդյունքները շարադրել գիտական ոճի պահանջների և էթիկայի կանոնների պահպանմամբ:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողներին ծանոթացնել գիտական խոսքի տարբեր ժանրերի առանձնահատկություններին,
- ձևավորել հետազոտության նպատակ և խնդիրներ ձևակերպելու հմտություն,
- խորացնել մասնագիտական գրականության վերլուծության հմտությունները,
- ծանոթացնել գիտական ապարատի կառուցման սկզբունքներին (հղումներ, մատենագիտական ցանկեր),

զարգացնել հետազոտության արդյունքները գիտական էթիկայի կանոնների պահպանմամբ շարադրելու հմտություններ: